



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՅՈՒՍԵՓՑԻ ԱԶԳԱՏՈՆՅ

Ե. Ի.

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱԻԱՁԱԿ

## Ա Բ Ռ Ի Ե Օ Մ

ՏՐԱՊԻՉՈՆԻ ՀՈՅ ԴԻԷՂԵՐՈՒ ՄԵԶ

1795—1840

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ

\*\*\*

Ժ. Ա. Դ. Ա. Ր Շ Ա. Պ Ա. Տ

Մայր Արքույթ Մրգայ Եղմիածնի

1905

891.99  
2-26

19 NOV 2011  
E105

ՅՈՒՍԵՓՑԻ ԱԶԳԱՏՈՂՄ

82

891.99

Հ-26

մար.

b h

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱԻԱԶԱԿ


Ա Բ Ռ Ի Ե Օ Մ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԵԶ

1795—1840



Ս. ՀԱՅԿՈՒՆԻ



Վ. Ա. Դ. Ա. Ռ Շ Ս. Պ Ա. Տ

Տպարան Մայր Արքույթ Մերոյ Էջմիածնի

1905

06 JUN 2013

37932

Дозволено Цензурою, 8 Июля 1905 г. г. Тифлисъ.



1368  
41

Այս իրական անցքի գրուածքը, որպէս եւ<sup>1</sup>  
ուրիշ շատ մը գրուածներ ունիմ; զորս զրի առած  
էի 1867—1890. այդ ժամանակ զաղափարներով  
շատ թերի լինելով չեմ կարողացած կարեւոր  
կէտերու վրայ ուշ դարձնել. ներկայ գրուածն  
երկար ժամանակ պահած էի, որպէս զի օք  
թերիներն ուղղեմ: սակայն ընդ միշտ պատահելով  
դժբաղդ դէպքերու, այդ իսկ պատճառաւ՝ աղքա-  
տութեան եւ թափառական կեանքի անողոք մի-  
քաններուն մատնուած լինելով եղծերս մեծ մա-  
սամբ անկատար մնացած են, որպէս սոյն «Աք-  
րահամ»», որ տեղացիք «Աքրիեօմ» կանուանեն  
եւ նորա ուրիշ գործերը համութեամբ ու տհա-  
ճութեամբ կը պատմեն:

Տրապիզոնի հայ գիւղացու չարքաշ կեանքը  
ուրիշ հատորով սկսուած է լոյս տեսնել:

—♦—

1.

ՄԱԼԱ ԳԻՒՂԻ

Տարագիզոնէ 7-8 ժամ՝ յարկեմուտսո ընդ ծովեայ  
կը գտնուի Փլաթանայ կոչուած գիւղաքաղաքն,  
որ ունի բնական նաւահանգիստ, ուր կապաս-  
տանին փոթորկի ժամանակ առ հասարակ ամեն  
կարգի նաւերը։ Փլաթանայէն 2 4|2-3 ժամ բարձր  
ի հարաւ ձորահովտի մը երկու կողերու գագաթ-  
ներու վրայ (արևելեան և արեւմտեան) կը տես-  
նուին միջակ աստիճանի լեռներ ու բլուրներ,  
որ սիրունատես անտառներով պճնուած են։

Հինաւուրց այս անտառները ձորի երկու կողերն ու ողերը, նաև գագաթներու վրայ գըտնուած բլուրներն և լեռներն այնպիսի խիտ առ խիտ պատած են, որ կարծես ձորէն մինչև գագաթը մի զմայլելի ծառ լինի, ճիւղերն տակաւ առ տակաւ ամփոփելով գագաթը կազմած, նաև մեծ և փոքր բլուրներ այս այն կողմ տարածած:

Իսկ մօտէն դիտողը կը տեսնէ բնութեան հրաշլի տեսարանը—անտառային բոյսերն, որ

բազմաթիւ տեսակներու բաժանուած՝ իւրաքանչիւր վայր մի մի տեսակը դրաւած, քիչ անդին ևս մի ուրիշ տեսակ իրար փարած կը հովանաւորեն զիրար. մի ուրիշ վայր ալ ամեն տեսակ խառն ի խուռն դրկից դարձած՝ նոյն վայրը գոյն զգոյն զարդարած են.—Վերջնոյս տեսարանը ըզմայլելի է. աժրի ծառեր յաղթանդամ և ուղիղ բնով ուղղուած են յերկինս ու իրենց հաստ ճիւղերը տարածած են իրենց շուրջը կը հովանաւորեն ցածը դանուած թեղի, մանի, հայի, լորի, բալընի, խոզկազնի, կաթնտերեպի, ծուաղնի, մաշմուրքի, կաղնի, ըզրի, լաշի ևն. ևն, ծառերն ու թփերը:

Այս անտառի թագաւոր աժրին ուղղածիդ՝ սիգապանծ կանդնած՝ իր արագ աճումով յերկինս բարձրանալու միջոցին ստորին ճիւղերը գետին կը թափէ, կարծես կամաւ տեղի կուտայ իր հովանուն տակ աճող ծառերուն:

Տեսարանը քաղցր է ամառ ժամանակ. մեղմ քամին ամբողջ անտառիս մէջ կը յառաջացնէ ալիքներ, որ տեսնողն կանաչ ծով մը կը կարծէ:

Չմեռ ժամանակ այս տեսարանը այլ կերպ կը փոխուի. դու պիտի կարծես թէ տերեւաթափ ծառեր, մերկ լեռներ ու խորտ ու բորդ ժայռեր, անշնորհք ձորեր ու ծամկներ պիտի նշմարես.—Նչ, ձմեռն ևս ունի իր գեղեցկութիւնը. այն հսկայ ու միջակ ծառերն, որ տերեւաթափ մինելով մերկացած ձեան խաւերով պատած,

բայց ներքեւ գտնուած կը ընին, ծուաղնին, դաբնին, բացդառին, լաշին ևն. իրենց լայն ու մեծ տերեւաներուն աւելի կանանչութիւն և կենդանութիւն տուած կը շողջողան, ի հանդէս կգան գիտողին խայտախարիւ ձեան խաւի հետ:

Այս անտառն որ հիանալի կերեի, գնամ, մէջը թափանցեմ. մերձենամ այս կամ այն տեսարանին, ի մօտուստ դիտեմ, աւելի քաղցր հաճոյք ստանամ կասես, բայց ուր. կարելի չէ առանց առաջնորդի մի քայլ անգամ առնել. գարերով այդ վայրին տիրացած ու դրաւած մեծ ու փոքր ծառերն ու թփեր, փշեր ու ցախեր մի գատարկ վայր չեն թողած. գետնի երեսը, օդի մէջ, ամեն ծակ ու ծուկ ծեփած են. Զիմապիլանկա փուշն<sup>1)</sup> , որ մատի հաստութիւն ունի՝ միաձեւ հաստութեամբ թուփէ ի թուփ, ծառէ ի ծառ անցած է. մէկ մասը գետնի վրայ բուլք կազմած, հարիւրաւորներ ու հազարաւորներ իրար խառնուած անթափանցելի դարձուցած են այս անտառը և ոչ իսկ օձ կարող է սողալ ազատ։ Կարծես թիկնապահներ եղած լինին ծառերուն պահպանելու անտառը փչացնող մարդէ ու անասունէ։

Զորահովտիս ձախ կողին վրայ մի փոքր զառիվայր տեղ բռնած է Մալա գիւղը, ուր տներն

1) Սորա վրայի փշերը նօսր են, սակայն մեծ են մասուրի փշէն և շատ կարծը լինչպէս բռնը։

մի կարգի վրայ շինուած են, ամեն մի տուն իրարմէ 1—2 հազարամէթը հեռի<sup>1)</sup>: Այս ի հիւսիս յարկելս հակուած գիւղի մերձ, հանդէպը ևս կայ քանի տնուոր հայեր-փոքր Մալա կոչուած:

Այս երկու գիւղերը մի փոքրիկ ձորակ կը բաժանէ, մեծ և փոքր Մալաներու տներն ձուրակի մօտէն կոկոխն, տակաւ առ տակաւ կը հեռանան որպէս եռանկեան վրայ շարուած լինէին:

Մոտ 100 տնէ բազկացած այս երկու թաղերու հայեր ո՞ր դարու մէջ այստեղ հաստատուած են, դժուար է ասել. միայն այսչափ դիտեմ, որ Մալայի հայեր բոլորովին տարբեր հընչում ունին—կոկորդային ինչպէս արաբերէնը. մինչդեռ միւս գիւղացիները մեծաւ մասամբ Համշէնցի և Սևդետացի<sup>2)</sup> գաղթականներ կը համարեն զիրենք, հնչումը ևս մօտ է եղերացւոց հնչման:

## 2.

### ՄԱԼԱՅԻՆԵՐ

Աւանդութեամբ գիտենք որ երկու դար առաջ այդտեղ հայեր կային. իմ պապու հայրն (Դազար) Մալայէն Տրապիզոն եկած՝ հացադործ եղած է. ապա Զեֆուող գիւղն եկած, ամուսնաւ

1) Այս գիւղի տներն իրարու մօտ են. ուրիշ հայաբնակ գիւղեր շատ քիչ կը պատահի այսպէս:

2) Սև գետացիներու վրայ կը խօսի առանձին:

ցած է. նոյնպէս շատ մը ընտանիքներ Տրապիզոն հաստատուած են անորոշ ժամանակի մէջ:

Մալան Տրապիզոնի հայ գիւղերու արեմտեան կողմը կը գտնուի, հեռու է թէ քաղաքէն և թէ հայ գիւղերէն. միայն արեելեան կողմը 4—5 ժամ հեռաւորաւթեան վրայ կայ Արղալիա հայ գիւղը, այս երկուքին մէջ եղած լեռնաշղթան ու խիտ անտառներն յարաբերութենէ խղած են և կամ հին ժամանակները չէին գիտեր թէ այդ տեղերն հայեր կը բնակին: Մինչդեռ շատ մը գիւղեր 2—3 ժամ իրարմէ հեռի սակայն քիչ շատ յարաբերութեան մէջ էին, իրար հետ խնամութեան կապ ունէին. իսկ Մալացիք զրկուած լինելով յարաբերութենէ, թերեւ գորա համար տակաւ առ տակաւ հնչման ձեռ փոխած են, կամ հինաւորց հնչումը պահած են. միւս գիւղացիներն ենթարկուած են շրջապատող մահմետական լազերու աղդեցութեան:

Աւանդութեամբ գիտենք, որ երկու դար առաջ այդտեղ հայեր կային, թերեւ Սև գետի արիւնալի անցքէն յետոյ այդտեղ ապաստան գտած. առ ահի կղզիացած էին, որ ո և է ենիշէրիի քարբարոսութենէ աղատ մնան:

Չորս-հինգ սերունդ գիտենք, որ աղատ աղարած, աղատ օդ շնչած անտառի խիտ առատ պտուղով ու որսի մասով մնած այս ժողովուրդը պիտի արիւնար, ուժեղ ու սրտոտ սերունդ պիտի արտադրէր, ինչպէս այսօր իսկ կը տեսնուի:

Մալացիք 1730—60 թուականներուն լուսը ովզին ապահով կետնք վարած են շնորհիւ իրենց կտրիճ երիտասարդներու և խոհեմ կտուավարիչներու իրենց տան շուրջը գտնուած խիտ անտառները տակաւ առ տակաւ արմատախիլ անելով փաքրիկ արտորայք կաղմած բահով ու փետատով լազուտ կը սերմանէին, հաց կը պատրաստէին այդ լազուտէն:

Կաղինը, որ Տրապիզոնի արեւելեան հայ գիւղացիներու գլխաւոր ապրուսափ միջոցն էր։ Մալայի մէջ այսօր իսկ չկար. միայն կարգ մի պտղատու ծառեր, այն ևս շատ քիչ. վասն զի հետզհետէ թափանցելի դարձած անտառէն կը հոգային ամեն պտղեղէն։

Ամեն տուն փեթակ ու կով ունէր, նաև ոմանը ոչխար:

Իւղը, պանիրը, մածունը, սերը, կարագը առատ էր, նաև մեղրը. բացի փեթակի մեղրէն անտառին խորը ծառներու խոսուներու մէջ շատ առատ կը գտնէին վայրենի մեղր, որ աւելի քաղցր էր և համեղ քան փեթակի մեղրը։

Այրեր տան ամեն պիտոյքը հոգալով հանդերձ բուրդ կը մանէին, իսկ կանայք ևս կանեփ. զորս կանայք ներքին և արտաքին շորեր պատրաստելու համար կը գործէին։

Իրենց փոքրիկ, սիրուն, վճիտ ջրով լի ձուրակներու մէջ առատ է կարմրախայտ, մանր խիստ համեղ ձուկը, որ այս տողերը գրողը կերած է։

Ամեն մարդ իր չախմախաւոր հրացանը ունէր. իւրաքանչիւր հրացան, որ կոշտ ու մեծ էր, մօտ 10 օխա կը կշռէր. վառօդի ամանը, որ փայտէ կոփուած էր սրտի ձեռվ, մի օխա վառօդ կը պարունակէր. նաև իւրաքանչիւրն ունէր դարաղուլախ կոչուած 1<sup>4</sup><sub>2</sub>—2 արշին երկարութիւն ունեցող գանակն նոյնպէս և ատրճանակ մը։

Որսը, ասացինք, սովորական արհեստ էր. թռչուն սպաննել մեղք էր, չորքոտանի վայրենի կենդանիներ ու գագաններ շարունակ կսպաննէին, եղնիկի ու վայրենի ոչխարի միսը կուտէին, մորթը եկեղեցւոյ մէջ կը փռէին, որ վըրան աղօթեն. խօզի միսը կուտէին, մորթին տըրեխ կը շինէին։ Գայլ, արջ, աղուէսի միայն մորթը կը հանէին, տան մէջ իբրև փռոց կը գործածէին, կամ ցած աթոռներու վրայ կը հաստատէին նստելու համար։

Գիւղի հիւսիսը 1<sup>4</sup><sub>2</sub> ժամ հեռաւորութեան վրայ ունէին մի եկեղեցի, ուր կերթային առ հասարակ ամբողջ ընտանեաց մեծ մասը միայն կիւրակէ և տօն օրերը, այր մարդիկ զինուած և կէս աւուր ուտելիքի պաշարն ևս խայտախարիւ շանթայի մէջ զետեղած՝ իւրաքանչիւր ընտանիք հետը պիտի ունենար:

Զերմ կրօնասէր և աղօթասէր էին, առաւ ոտ և երեկոյն և հանգստեան ժամուն, հացէ առաջ և ուտելէ վերջ աղօթքը սովորական էր, ամեն գործի ձեռնարկելուն և ճանապարհ դնաւ

Իուն Աստուծոյ յաջողութիւնը խնդրել պարտաւորութիւն էր. շաբաթ երեկօյներն ամեն տան մէջ խնկարկութիւն պիտի լինէր՝ իւրաքանչիւր անդամ ձեռքով խնկի ծուխն իր կողմ քաշելով երեք անդամ երեսը կը խաչակնքէր, առաւօտ երեսը յարելս դարձած պիտի լուար, խաչակնքէր ու «Հայր մեր» ասէր, նոյնպէս անկողնոյ մէջ նստած «Հայր մեր» պիտի ասէր ու պառկէր:

3.

### ՄԵԾ ՅՈՒՍԵՓ ՊԱ.Պ

Այս ժողովուրդը, որ ապրուստի միջոցը դիւցացուցած՝ ազատ օդ կը շնչէր, ո և է բռնաւորի երես չէր տեսած, այր, կին, ալեոր ու պառաւ, երիտասարդ ու պատանի, անհոգ ու զուարձալի կեանք կը վարէին, անհոգ աշխարհային ցաւերէ:

Այս գիւղի մէջ հարիւր տասն և հինգ տարեկան մի ծերունի կար. նա յաղթանդամ, թէ և մազ ու մօրուս սպիտակացած, սակայն առոյդ և առողջ էր ամեն անդամներով, նա՝ կերեկ ժամանակին լսած էր Աև գետի անցքը—կոտորածը, բայց ուրիշներու չէր պատմեր: Երկար ժամանակ նա Մալայի կառավարիչ եղած էր. կառավարչութեան միջոցին ոչ ոքի թոյլ չէր տար

քաղաք գնալու, մի դուցէ իրենց գիւղը յայտանուի, արտաքին ու է վտանգ սպառնայ այս գիւղին, որք կառավարութեան տուրք ինչ է չէին գիւտեր:

Մեծ Յուսէփ պապի հոգը և ուշը աւելի իր տան վրայ էր. գիւղին մէջ ամենէ հարուստն էր և բարեկեցիկ կեանք կը վարէր, ունէր բազմաթիւ հօտեր ու նախիր, բազմաթիւ որդիք, թոռներ ու թոռնորդիներ: Նա, կասեն, ունէր 500 փեթակ. գիւղի ջրաղացն ու կանեփ և շալ ծեծելու կօբալն ևս իրեն էին: Նորա մի որդին ամեն օր ջրաղաց կերթար տան համար ալիւր պատրաստելու, միւս մի թոռն ամեն օր իշով վառելափայտ կը կրէր տուն. մին նախիրի հետ կերթար, երկուսը հօտի հետ. մին այծերը, մի ուրիշը հորթերը, մէկը փեթակներու վրայ կը հսկէր, կը նորոգէր, մէկ ուրիշը արտը պարարտացնելու համար կուղի կը կրէր, կը տարածէր. մէկն ևս տան կահ կարասիներ կը պատրաստէր հաստ կոճղեր տաշելով՝ կոփելով ևն. նորա բազմաթիւ թոռներն՝ աղջիկ ու տղայ մի մի գործի յատկացուած էին, անտրտունջ իրենց վրայ գըշուած պարտքը կատարելու պատրաստ:

Պապ ու մամ վերին աստիճանի աշխատաւոէր էին, իրենց ժամացոյցը—աքաղաղը խօսածժամանակ կը զարթնէին, կը լուացուէին, կազօթէին. ապա հարսներն ու աղջիկները կը զարթեցնէին: Կաւանդեն թէ չէին դըշիր աշխա-

տաւոր որդիքն ու թոռներն և թոռնորդիներն զարթեցնել անուշ քնէն. ասոնք դաւուլ և զուռանայ սազած էին, երբ արշալոյսը բացուելու վը րայ կը լինէր, քաղցր եղանակով կածէին որ զարթնեն:

**ՄԵԾ ՅՈՒՍԵԿԻ** պապը ծերութեան ժամանակին իր մեծ որդուն յանձնեց գիւղի կառավարութիւնը. նորան կտակեց, որ գիւղի վրայ լաւ հսկէ, չլինի այս գիւղի գոյութիւնը յայտնուի, ունէ մի տեղէ վտանգ սպառնայ գիւղին, նա մասաւանդ իրենց հարստութեան:

**Ա.ՅՄ ԳԻՎՂԻՆ ՄԷՋ ՄԻջակ Հարստութեան տէր Զաքար օղլի մէկը, որ վերին աստիճանի նախանձու էր, կուղէր գիւղի կառավարութիւնը ձեռք անցնել, բայց յարմար առիթ չէր գաներ. **ՄԵԾ ՅՈՒՍԵԿԻ** պապի մեծ որդին իր հօր նման չկարողացաւ քաղցրութեամբ կառավարել, սկսաւ խըստութեամբ կառավարել ժողովուրդը. Թէև քաջէր նա, աներկիւդ. ամբողջ 100 տուն գիւղացին իր աչքի առաջ նշանակութիւն չունէին:**

Դորա օրով լսուեցաւ որ Փլաթանայի կողմէրն ենիշերիներ հաստատուած՝ թուրք և յոյն ժողովութեան կը ճնշեն, կողոպտեն ևլն:

**ՅՈՒՍԵԿԻ** պապի մեծ որդին աւելի հետամուտ եղաւ, որ գիւղէն, իրենց սահմանէն մարդուրս չգայ. ինքն ևս սկսաւ բոլորովին որսորդութեամբ պարապիլ. դէպի Փլաթանայ տանող

մի արահետի շուրջը գտնուած անտառներու մէջ կը գեգերէր շարունակ:

Զաքար օղլին, չեմ գիտեր ուստի լսած էր, մի օր մի գրացու կասէ.—Մեղրը Տրապիզոնի մէջ մեծ գին ունի. մի բեռ տար, տես, եթէ արժէքը շատ է, մենք ևս տանենք:

Նոյն երիտասարդը կառավարչէն գաղտնի կերթայ քաղաք, այլ ևս չի վերադառնար. այս այն կողմ կորոնեն, չեն գտներ: Քանի օր վերջ գիւղի մէջ կը տարածուի թէ «մեղրը մեծ գին ունի քաղաքին մէջ»:

Գիւղացիք մեղր շատ ունէին. առատ-առատ կուտէին սակայն կաւելնար. թէև ոչ մի կարօտութիւն չունէին, իրենց աշխատանքը կը վայելէին, բայց կարծես մարդ հանգիստ օրն ևս չէ կարող տանիլ. աւելի հանգիստ վայելելու ձըգտում կունենայ, կուղէ հեռուները տարածել իր ձեռներն ու ոտները, հեռուի օդը շնչել, կարծելով թէ աւելի թարմ ու քաղցր կեանք պիտի գտնէ այնտեղ:

**ՄԵԾ ՅՈՒՍԵԿԻ** պապը իմացաւ այս ամենը. գիմեց գիւղացոց, ասաց.—Հաց ու թացան ունիք, շոր ու մոր ունիք, ի՞նչ բանի կարօտ էք, որ քաղաք մեղր տանիլ կուղէք. ես գիտեմ, մեր հանգիստ օրը սև պիտի գառնայ. ևնէ շէյթանի կեօր, նէ եռուցինէ թիւքիւր (ոչ սատանան տես և ոչ երեսը թքէ). վտանգ պիտի բերէք մեր խաղաղ գիւղին:

Մեծ Յուսէփ պապն զգաց, որ գիւղին վը-  
տանդ մը պիտի սպառնայ. կրկին և կրկին զգու-  
շացուց սրդուն, որ մի հնար դտնէ, առաջը առ-  
նէ. Որդին ևս իր ուժին և քաջութեան վստահ  
սկսաւ տասը օխանոց (մօտաւորապէս մի փութ)՝  
Քիչենիուխ և ութ օխանոց մաքարայ դոր-  
ծածել:

Գիւղացիք Զաքար օզիլի յորդորանքով գաղտնի մեղքը կը տանին քաղաք, կարգ մը մանր մուշ նըր փայլուն զարդերու հետ կը փոխեն. այս գաղտնի չմնար: Մեծ Յուսէփ պապի փոքր որդին ևս կը միանայ քաղաք գնացողներու հետ. ինքն ևս կերթայ ուլունք, դանաւկ, կոճակ ելն. բաներ կը բերէ, մի առ ժամանակ գաղտնի կը պահէ, յետոյ կը տարածուի ամսորդ ունեցի մէջ:

Այդ ժամանակի թուրքը կառավարութիւնը գիւղացիներէն հաւաքելի տուրքը աճուրդով կը-  
տային. իւրաքանչիւր կապահառու իր շրջանի  
գիւղօրէից տուրքը ինքը պիտի գանձէր: Փլա-  
թանայի ենիշէրիներն երբ լսեցին թէ Մալա մեծ  
գիւղ է, մեզը առատ և շատ համեղ, անմիջա-  
պէս մի խումբ ենիշէրի յղուեցաւ Մալա, որ  
տեսնեն, տուրք սահմաննեն այս ռեւորի վրայ:

Ենիշերիները տեսան, որ դիւղացիք մեծ մասամբ զինուած են. սկսան քաղցրութեամբ վարուիլ և առաջարկեցին, որ տարին ինը լիտր մեղր և ինը լիտր իւզ տան թագաւորին, Յուսէփ պապը կանչեց քանի դիւղացիներ, ասաց.

—Մեր լաւ օրը դասնացուցինք. Ես ինչ ասեմ մեր տղայոց, կը գուշակեմ որ ապագան չար է. լաւ է տալ՝ մեր դիւզէն հեռացնել:

Գիւղացիք տեսան տուրքի չնչին լինելը, իբրև  
ողօրմութիւն անմիջապէս տուին և պատուելով  
ճանապարհ դրին։

Հետզհետէ ենիշերիներու խժդժութիւններու լուրը Մալա հասաւ. իմացան թէ Համշէն, Սև գետ և ուրիշ տեղեր ինչ սարսափելի կռտուրած և աւերումներ արած են:

4.

Կ Ա Տ Ա Ր Ա Յ Ո

Այդպիսի միջոցի մը մէջ Զաքար օղլին ուշ  
զեց գիւղի կառավարութիւնը ձեռք ձգել. գիւշ  
զացիք մեծ Յուսէփ պապի կողմ բռնեցին. սաս-  
տեցին Զաքար օղլուն որ այլ ևս այդպիսի խըն-  
դիր չյարուցանէ: Զաքար օղլին զայրացած՝ գը-  
նաց Տրապիզոն, մահմետականութիւնը ընդու-  
նեց. Տրապիզոնի կառավարչին սիրելի դաւնա-  
լու համար Մալայի տուրքն իր վրայ առաւ որ  
տարիէ տարի ինքը վճարէ: Ապա դնաց Ենիչէ-  
րիներու գլխաւորի մօտ, իր անունը արձանա-  
գրել տուեց իրենց տօմարին մէջ. իր հետ առաւ  
մեծ խումբ մի Ենիչէրիներ, Եկաւ Մալա. ամեն  
մի տան վրայ ինը լիտր իւղ և ինը լիտր մեղք  
տուրք սահմանեց:

Գիւղացոց սմանց համար ծանր էր այս



տուրքը. թողին տուն ու տեղ, քաղաք գնացին. ոմանք ևս ուրիշ գիւղեր փախան:

Մեծ Յուսէփ պապը հառաջանք մի արձակեց. ուզեց դիմադրել՝ չընդունել, Զաքար օղլուն ևս սպաննել, աակայն մտածեց հետևանքը՝ ձայն չհանեց. տուեց պահանջածը:

— Տղէք, ասաց նա, իդա շան էրիսը տեսնուշ չիմ ուզիլ, ինչ օր կուզէ՝ տուեք թող էշթայ, էրիսս հօնիլ միք. իդա հալիւոր վախտիս ինձիկի մեղքի մէջ միք ձղիլ:

Զաքար օղլին այժմ թէ գիւղի կառավարիչ է և թէ տուրք հաւաքող, շարունակ ևս ենիչը բիներու հետ յարաբերութեան մէջ. գիւղացիք գրգոռուեցան նորա գէմ, խորհուրդ հարցուցին մեծ Յուսէփ պապէն. սա զգուշացուց, յայտնեց թէ. — Աւ գետի կոտորածը այստեղաւելի սոսկալի կը կատարուի, մի մարդ չաղատուիր. այն սոսկալի կը կոտորածէն յետոյ ենիչէրիներն ամեն կողմ տարածուած են, տեղ չենք դաներ մեր գլուխը պահելու:

Անցաւ մի տարի, մի օր մեծ Յուսէփ պապը ու գիւղի երկելիներն հաւաքուած մի վայր կը խօսէին. յանկարծ լուր տարածուեցաւ թէ Զաքար օղլին խումբ մի ենիչէրիներով կգայ.

— Աստուած խէրն ընէ, տղէք, ասաց պապը. գշկյս գէշ ներազ տեսած ունիմ. ինչաք հիմի իմ տօն հօմար միտք կընէի, հիմիճակ գեղի վրայ միտք կընիմ:

Զաքար օղլին եկաւ. — Ծօ, Յուսէփ, ասաց. յորին ինչոք հիմի քու վէրկին (տուրքը) տուած չունիս. դու թագաւորին էլ խափուշի էլած ունիս:

Մեծ Յուսէփ պապը յուզուած նայեցաւ իր որդւոց, մի գուցէ տուած չեն. մինչդեռ ինքը պատուիրած էր, որ կանխիկ տան:

— Զաքար ակա, ասաց մեծ որդին. չէ, օնցած տարի տուի:

— Ծօ, շուն, զայրացած տաց Յուսէփ պապը. եիս քու բերօն օսկոր նետեցի էօր օսկորը կը, յիշի չաստի գաս, ինձիկի խածիս. շօն լոմօն թուրքըցար, հիմիճակ էլ գաս իմ վրայ շէու (զրպարատութիւն) ձգիս. քեզի վնվ տաց, օր իմ էրիս էլլիս: Ասաց և անմիջապէս իր հըրացանը կրակեց. Զաքար օղլին տապալեց գետին:

Այս օր տեսան ենիչէրիներն, զինուած հայերէն երկիւղ կրելով խոյս տուին. թէև Յուսէփ պապը կը պօտար. — Զեզիկի ինչիմը չկայ. էկէք, ձիր վէրկին առէք, գնացէք: Սակայն նրանք հեռացան, պրծան:

Զաքար օղլու դիակը քաշեցին ձորը, որ շներ ու գայլեր ուտեն:

Զաքար օղլու սպանութեան լուրը հասաւ Տրապիզոն, Սիւրմենէ, Փլաթանայ. մոլեռանդ մահմետականներ, մօլաներ ու ենիչէրիներ կը խմբուին. գրգոռուած կը մտնեն Մալա, կսկսին կոտորածը: Մեծ Յուսէփ պապը իր որդիքներով

ու թռուներով կը դիմադրէ. սակայն գնդակի մը զոհ կերթայ, Ենիշէրիներ այդտեղ մեծ կոտուրած կանեն, առանց խնայելու կանանց ու եւրախայոց:

Սարսափելի կոտորած տուին մեծ Յուսէկի պապի տան. չխնայեցին կանանց ու մանկանց, օրօրոցի երեխան անդամ դառան պէս մորթեցին. մեծ որդին Նահապետ փոքր դիմադրութենէ վերջը խոյս տուած, ջրաղացը մտած էր. այդտեղ բռնեցին, ստիպեցին մահմետականութիւնը ընդունել. նա ընդունեց. սպաննեցին։ Փոքր որդին Մովսէս մահմետականութիւնը կընդունէ և կը տարուի Փլաթանայ. հոկողութեան տակ կը պահուի մի ժամանակ. թուրք աղջկան մի հետ կամուսնացնեն, Փլաթանայի բարձրերն մի ընդարձակ կալուած կըտան. թոյլ չեն տար այլ ևս որ Մալայ գնայ<sup>1)</sup>:

Միջակ որդին կոտորածի միջոցին շատ մը գիւղացիներու հետ մտաւ խիտ անտառներու մէջ. 1—2 շաբաթ անցուց. տեղեկութիւն տուաւ որ իրենց տնէն ազատուած մէկը չկայ. յուսահատուած այլ ևս չուզեր այդ գիւղը տեսնել. խելացնոր կանցնի անտառէ յանտառ, գիւղէ ի գիւղ (գէպի յարեելո), 3—4 աւուր ճանապարհ կը կտրէ, մինչև կը հասնի Կալաֆկայ կոչուած անտառավայրը։

1) Այժմ Մովսէսի սերունդը Մուսլի օղլի կասուի. մօտ 200 տուն եղած են և մոլեռանդ մահմետական։

5.

### ՓՈՎՐ ՅՈՒՍԷՓ ՊԱՊ

Մեծ Յուսէկի պապի սերունդէն միակ այս մնացող միջակ որդին հեռացաւ իրենց գիւղի շրջականերէն. գաղար առաւ այնպիսի մի անտառավայրի մի մէջ, Մալայի անտառներէն աւելի ընդարձակ, աւելի հսկայ ու խիտ ծառերով պատած. առանձնացաւ, մնաց քանի տարի ճըգնաւորի պէս<sup>1)</sup>: Թերեւ հայրենի գիւղէն ու ընտանիքէն հեռի գտնուել որոշած էր որ տխուր յիշատակութիւններէն ևս զերծ մնայ, կամ անծանօթ վայր մը խոյս տուած է՝ ու և է վտանգչապառնայ իրեն։

Նա ապրած է ամառ ժամանակ անտառային պառւղներով, ձմեռներն ևս ընդեղէնով, որ այս անտառներուն մէջ առատութեամբ կարող էր գտնել։

Հիւղեակ մը հիւսած էր ծառերու բողբոջներէ, ուր կը բնակէր տարւոյն երեք նղանակներուն մէջ. իսկ ձմեռները ծառերու փապարներու մէջ։

Սև գետի փախստական հայեր, որ այս վայրենացած մարդու մօտերն բնակութիւն հաս-

1) Ոմանք 5 տարի, ոմանք 7 տարի, կասեն, բոլորովին մարդու երես չէ տեսած։

տատած էին, տարուէ տարի իրենց պիտոյքի համար կը թափանցեն անտառի խորը, կը պատահին սորա. կը տեսնեն մերկ, քանի կտոր պատառտած շուեր վրան, մազերն երկարացած, վայրենի վիճակի մէջ. հարց և փորձ կանեն, կիմանան որ հայ է. անմիջապէս կը վերցնեն, գիւղ կը տանեն, կը խնամեն. քանի ամիս յետոյ կամուսնացնեն:

Օվանէս ամուսնանալէն յետոյ չուզեց դիւզը մնալ. դիւզէն գործիքներ վերցուց, առաւ կինն, գնաց իր բնակած հիւզակի տեղ տուն շինեցտան շուրջը գտնուած ծառներն արմատախիլ արաւ, կազնի տնկեր տնկեց, պտղատու ընաանի ծառներու տեսակներն աճեցուց, այսպէս որ սկսաւ ապահով կեանք վարել:

Կեանքը ինչպէս անցուց, այդ չեմ գիտեր, միայն գիտեմ որ մինչև քսան տարի զաւակ չունեցաւ. բազմաթիւ ընտանիքի մէջ ապրողի մը համար գժուար էր տանիլ միայնակ ապրիլ, նամանաւանդ որ վիճակն ևս բարւոքած լինելով օգնական ձեռքերու կարօտ էր, կովերն ու հորթերն շատացած էին, խնամ տանելու մարդու պէտք ունէր:

Օվանէս երկար մտածեց. մի օր չգիտեմ խելքին ինչ փչեց, երկու կով առաջը ձգեց, քշեց որ գնար քաղաք. Դեռ քաղաք չհասած մի թուրք ընկերացաւ սորա, հարցուց, թէ ուր կը տանի կովերը և ինչու համար. Օվանէս կը պա-

տասխանէ թէ. — Կին մի ունիմ, չքեր է, կուզեմ երկրորդ կին մի առնել. կուզեմ կովերը ծախել ծախուը հոգալու համար:

— Աստուծոյ սիրուն, կասէ թուրքը, այդ բանը մի աներ. քո ձեռնով քո տունը կը քանչդես. ես ունէի, կասէ, մի կին, հանգիստ կեանք կը վարէի. իմ ամեն գործերս անթերի կը կատարուէր, կարծելով թէ երկրորդ կին մի ես առնեմ աւելի լաւ վիճակ պիտի ունենամ. առի, սակայն աւելի դժբաղդացայ. տանս գործերը իրաբու վրայ ձգեցին, օր օրի վրայ տունս քանչդուեցաւ. ստիպուեցայ վերջինը թողուլ. բայց առաջի կինս մի անգամ երես առած էր, հնար Աստուծոյ չեղաւ ուզզութեան բերել. մեծ ու հացալից տունս քանդուեցաւ, այսօր մուրաց կան գարձած եմ. Այս մարդ, կասէ, գարձիր յետ, յետոյ կը զզաւս:

Օվանէս թուրքին կը լսէ, կը վերադառնայ տուն, կնոջ հետ սիրով կապլի հինգ տարի ևս չինգ տարին լրանալուն կինը կը յղանայ, մի արու զաւակ կը ծնի:

Օվանէսի ուրախութեան չափ չկար. երախան մկրտել կըտայ ի Սև գետ յօշոտուած Տէր կարապետի որդի Տէր կարապետին, և իր հօր յիշատակը պահելու համար անունը Յուսէփ կը դնէ:

Այս Յուսէփին է, որ սկիզբ դրեց այսօր 160 տասն կազմով Յուսէփի ցեղին, որմէ առաջ

եկած է մեր պատմելիք Յուսէփից աւազակ Արթին և ըիեօմը (Աբրահամ)։

Փոքր Յուսէփ պապը կը մեծանայ, կամուսա նանայ, երեք զաւակ կունենայ, որոց անունները կը դնէ Օհան, Պետրոս և Օվանէս։

Օհան մի որդի կունենայ, անունը Սէրգիս, Սէրգիս երեք որդի կունենայ Կայֆէճի (մականուն), Յուսէփ և Աբրիեօմ, որու վրայ խօսելու եմ։

Աբրիեօմէն ծնաւ Պօղոս, Օվանէս և Կարապետ՝ Վերջինս այս տողերը գրողի խաչի կընաքահայրն է։

Աբրիեօմի մեծ որդի Պօղոս ունի զաւակներ. միջակ որդին Օվանէս, որ յաղթանդամ և շափազանց ուժեղ լինելուն անունը զօլախ գրած էին. 2—3 անդամ յիմարանոց գրուած է և անդաւակ. իսկ սորա փոքր եղբայրը Կարապետ ունի մի որդի Աբրիեօմ անուն. Աբրիեօմ ևս ունի որդիներ, Արթին, Սեդրակ և ուրիշներ, որ այսօր կան։

Փոքր Յուսէփ պապի երկրորդ որդին—Պետրոս անդաւակ մեռաւ։

Սորտ եղբայրն Օվանէս չորս որդի ունեցաւ. որք են Արթին, Պօղոս Զատիկ, որ կախազան հանուեցաւ և Վարթեվան, որ մեռաւ առանց զաւակի։

Օվանէսի մեծ որդին Արթին ունեցաւ չորս զաւակ. Սէրգիս, Օվանէս, Մարտիրոս և Կարապետ։

Սէրգիս ունեցաւ երկու զաւակ Արթին և Օվանէս, նոյնպէս Սէրգիսի միւս եղբայրներն բազմաթիւ զաւակներ ունեցան։

Սէրգիսի մեծ որդի Արթին ունեցաւ հինգ որդի. Աղամ, Վարթեվան, Պետրոս, Կարապետ, Մարտաշէս, որք այս տողերը գրողին աշակերտած են։

Մեծ Յուսէփ պապի փոքր որդին Մովսէս, որ մահմետական դարձաւ, նա ապահով և հանգիստ կեանք վարելով նորա սերունդը շուտ աճեցաւ. այսօր 200—250 տուն կազմած են. իսկ միջակ որդին Օվանէս երկար տարիներ անդաւակ մնաց և թափառական կեանք վարած լինելուն քիչ աճած է, մօտ 150—160 տուն։

Մուսի օղիներու վրայ լաւ տեղեկութիւն չունիմ, իսկ Յուսէփցիներն լաւ գիտեմ. Մոքալնդհանրապէս շատ աներկիւզ ու քաջ են. ամբողջ ժողովրդէն Յուսէփի կամ Յուսէփցի կը կոչուին։

Այս ժողովուրդը կը պարծենայ, որ Յուսէփցոց ցեղին կը պատկանի. տեսած եմ կիներ, որք շես Յուսէփցի եմ» ասելով կը պարծենային։

Յուսէփցիք կը բնակին Կուշանայ, Շանայ, Մարայներ, Սամարօքուայ, Ճօշարայ, Կումլայ գիւղերու մէջ. մէկ մասն ևս անցած է Խրիմ։

6.

Ա Բ Ռ Ի Ե Օ Մ

Մենք այժմ սկսինք խօսիլ վորբ Յուսէփ  
պապի անդրանիկ որդի Օհանի թռոռ Արքահամի  
վրայ, որ տեղացիք Արքիեօմ կը կոչէին։ Պիտի  
Նկարագրեմ համառօտիւ նորա տարօրինակ խօստ  
ու դաժան բնութիւնը, ընդհանուր ժողովրդեան  
վրայ ազդած սարսափն ու քաջութիւնը, որ այ-  
սօր ամեն տեղ կը պատմուի և շատ մը ծերու-  
նիներ կան, որ զինք անձամբ կը ճանաչեն։

Արքիեօմ ծնած կը լինի մօտաւորապէս 1790  
— 1800 թուականներուն. նորա մանկութիւնը  
կասեն շատ թոյլ ու մեղմ էր և դանդաղաշարժ-  
քանի մեծացաւ դաժան ընթացք մի ունեցաւ-  
նորա երեսը, կասեն, ծիծաղ ասած բանը չէր  
տեսած, նա կատակ ինչ է, չէր դիտեր. ամեն  
խօսք լուրջ կը հասկանար և կոխւ կը յարուցա-  
նէր. նորա հաստ և խոպոտ ձայնը-գոռոցը սար-  
սափ կազդէր իր հասակակիցներու վրայ։ Խօսակ-  
ցութեան ժամանակ, կասեն, կարծես ձայնը  
աղիքներու մէջէն դուրս կըդար և խօստ դժուա-  
րութեամբ, դորա համար այլ քիչ կը խօսիր։  
իրեն ուղղուած երկրորդ հարցումը կոռուզ կը  
վերջանար, իրանը կարճ ու կլոր, կուրծքը, կա-  
սեն, երեք թիզ լայն և կրծքի վրայ մի թիզ

երկար խիտ մազերով պատած էր. մինչեւ կեանքի  
վերջն ևս կուրծքը բաց կը շրջէր, նորա բազուկ  
ու սրունքները կարճ ու հաստ էին։

Այս մարմայն մէջ տեսնողը կը կարծէր թէ  
դանդաղութիւն կը տիրէ, հազիւ կրիայի շար-  
ժում ունենայ. բայց կը սխալի. նա արդարե-  
ցմիշտ դանդաղաշարժ էր, սակայն նա երբ մի  
բան անելու կամք ունենար կամ կըքէ բռնուիր,  
յանկարծական նորա ոստումը, հակառակորդին  
հասնիլը գնդակի պէս արագ էր, ուրուականի  
պէս յանկարծ կաներկութանար։ Խաղի ժամա-  
նակ կամ կոռուի, հասակակիցներու ձգած ձնա-  
գնդակը կամ քարը երբէք իրեն գիպած չէ.  
թոշունի պէս արագ կը թռչէր, եղնիկէն աւելի  
արագ կը վազէր։

Արքիեօմի տան տեղը չեմ յիշեր, այս գի-  
տեմ որ մի խիտ անտառի մէջ էր,  $\frac{1}{2} - \frac{5}{4}$  ժամ  
հեռու գրացիներէն. տանը վերին զառիվայրն  
3—4 ժամ երկար և անքնակ անտառ էր։

Նա յամառ էր. իր հայրը Աէրգիս չէր կա-  
րող ազդել նորա վրայ, չէր կարող տնական ուեէ  
գործով պարապեցնել. նորա Յուսէփ ու Կայ-  
ֆէճի եղբայրներն ևս տեսնելսվ Արքիեօմի տան  
համար ունեցած անտարբերութիւնը, նորա շը-  
ռայլ ու զեղիս կեանքը, իրենք ևս յուսահատե-  
ցան, տան հոգը թոյլ տուին իրենց հօր վրայ,  
որով տունը օր աւուր քայքայման ենթարկուեցաւ։

Այս տան մէջ միայն միսը առատ էր. վասն

զի Աբրիեօմ ամեն օր անտառ կը բարձրանար, որս կը զարնէր, որսը կեփէին, շատ անդամ հաց չէր լինիր, միայն որսի մոռվ կապրէին:

Աբրիեօմ որսորդութեան, ինչպէս նաև գիւնի մոլի դարձաւ, նա գինին կուշով կը խմէր, մի անդամէն 1 ½—2 օխայ պիտի խմէր: Որութու մէջ խողի միսը իրեն համեղ թուեցաւ, նա ուրիշ որսերու այլ ևս չհետեւեցաւ, սկսաւ հառուներ գնալ, խողերու բնակարաններ դանել: Մի քանի անդամ եանբօլի գնաց, քսան հատ խող սպանեց, տունը հեռու էր, քանի օր մնաց այդտեղ. խորոված շինեց, կերաւ, մի խողի դիակ ևս շալակեց, տուն բերաւ, նոտաւ, կերաւ, գիւնին ևս վրան խմեց, մինչև վերջացուց:

Սորա որկրամոլութիւնը գաղաթնակէտին հասած էր. մոլի դարձած էր գինւոյ և խողի մսի. Եանբօլի գնար՝ գինի չկար, տունը մնար՝ խողի միս չկար. իր գաժանութիւնը կրկնապատշեցաւ, մինչև անդամ կատաղութեան հասաւ. անբարոյականութիւն ևս օր ըստ օրէ իր մէջ անեցաւ, հետեանքը եղաւ մի հարս բռնաբարել:

Նա արդէն գողութիւն ևս կանէր, եթէ չեմ սխալուիր քանի հայեր ու յօյներ սպանած էր. ժողովուրդը այդ բանը գիտէր, բայց այնչափ չէր գրգուած նորա գէմ, որչափ որ հարսի մը բըռնաբարումը լսեց. սաստիկ ոխակալութիւն սնուցին Աբրիեօմի գէմ, սակայն մի բան չէին կարող անել. վասն զի հարսը Յուսէփցիներէն չէր. եթէ

վտանգէին, մի գուցէ, կը մտածէին, Յուսէփցիւ ական գրգուում ծագիւ թէն. Յուսէփցիներուն ևս հաճելի չէր այդ ամօթալի և չտեսնուած բռնաբարումը:

Աբրիեօմ իր գրացիներէն դեռ երախայ և պատանի միջոցին «Խըլառ» անունը ժառանգած էր. այժմ ամբողջ ժաղովուրդը «Խըլառ» անունով կը ճանաչէ. այն օր Յուսէփցի է «միր Խըլառը» կասէ, իսկ միւս հայեր «Խըլառը» ասած ատեն կիմացուէր աւազակ Աբրիեօմը:

Աբրիեօմ իր առաջ տեսնելով ամբողջ ժողովրեան ատեղութիւնը աւելի կատղեցաւ, աւմենափոքր առիթ մը կորսնէր, որ մարդ սպաննէ. երբ մտածման մէջ ընկղմած էր՝ յանկարծ մէկը նրան պատահէր, կամ մի հարցում ուզզէր, մի ուժգին ապտակ կտար երեսին, գետին կը տապալէր ուշաթափի:

Նա քանի անդամ զայրացած միջոցին դարադուախի մի հարուածով սպաննած է կով ու հորթ։ Այսպիսի վիճակի մէջ չէր կարող տունը մնալ, սկսաւ գիւղէ գիւղ ման գալ, գողութեամբ պարապիլ, մղուեցաւ հեռուն գնալ. ինչ տուն մննէր՝ խորոված, գինի ու ծոււածեղ կը պահանաջէր գեռ չնստած։ Անծանօթ գիւղերու մէջ կարեւութիւն չէին տար, ինչ օր ունէին այն կը գնէին սեղան. նա կուտէր, կը յագենար. մի կողմէն ևս տանտիրոջ գէմքը կը գիտէր. եթէ տանտէրը գժգոհ էր իր ներկայութենէն, կամ մի

ապտակի հարուած պիտի տար, ուշաթափ գետին ձգէր և կամ զարադուլախի մի հարուածով պիտի սպաննէր, այնպէս գնար: Ժամանակը դիտէր, շատ անդամ և գոհ սրտով կը մեկնէր: Նորա համբաւը (վատ) հեռու գիւղերն ևս արձագանք դտաւ: ամեն մարդ իմացաւ թէ ինչ կերպարանք ունի նա և ինչեր արած: այլ ևս ուր դտնուէր՝ կը ճանաչէին և առ երկիւզի ամեն յարդանք կըտային:

7.

ԽԸԼԱՌԸ ԿԱՄՈՒԽՆԱՆԱՅ

Աբրիեմի մերձակայ ազգականները խորհեցան որ նորա բռնած ընթացքը անպատուաքեր է իրենց ցեղին, տեսան, որ օր աւուր Յուսէփցիներն վարկարեկ լինելու վրայ են, որոշեցին ամուսնացնել, որ խելօքանայ: Այս Խըլառը ամուսնացաւ, մի առ ժամանակ տունը հանդիսանաց մինչև որ դրսէն բերած կողոպուտը սպառեցաւ: մի որդի ևս ունեցաւ: տեսաւ որ ապշուստի կարկը օր ըստ օրէ կաւելանայ, գիւղի մօտակայ յոյներու տներն կողոպտեց: նաև յոյն կանանց հագուստները բերեց, իր կնոջ հագուց, դրամն ևս մի առ ժամանակ գործածեց: Վողոպուտը, կասեն, ինչպէս կուդայ, այնպէս շուտ կերթայ: որկրամոլ ու շուայլ Խըլառը

մնաց դատարկաձեռն: դարձեալ դիմեց գողութեան և յայտնի աւազակ դարձաւ: Առ հասարակ թուրք, յոյն և հայ ժողովուրդը կուզէին մէջտեղէն բառնալ, սակայն Յուսէփցիներէն քառնիս կը պաշտպանէին: իրենց համար այդպիսի Խըլառը պատիւ կը համարէին: վասն զի երբ նեղ տեղ ընկնէին, կամ դրացու մէկին հետ ընդհարում ունենային Աբրիեմով երկիւզ պիտի ազդէին: ասոր համար էր, որ Աբրիեմի վատ կողմը չէին ուզեր տեսնել և լսել իսկ: Արգէն Յուսէփցոց ցեղին մէջ պակաս չէին քաջ մարդիկ: Խըլառի պաշտպաններ ևս քաջութեան մէջ հոչակուած լինելնուն՝ հայ, թուրք, յոյն ժողովուրդը ամեն անսարդանք լուսութեամբ կը տանէին, սպասելով յարմար առթի:

Քանի տարի անցաւ, չեմ գիտեր: Աբրիեմ ունեցաւ երեք որդի: Պօղոս արդէն կար, Օվանէս ու Կարապետ ևս եղան: Օվանէս ճիշդ իր հօրը մանկութիւնը ու պատանեկութիւնը ունէր, որկրամոլ էր և շուայլ: միայն բացառութիւն կը կազմէր նորա ծիծաղը, որ հայրը չունէր: Աբրիեմի տան ծախքը կաւելնար, ինք իր որդիներով ուեէ երկրագործական աշխատանք չունէին: նա շարունակեց իր աւազակութիւնը անխտիր կողոպտելով ամեն մարդու, միայն իր ցեղին մէջ 3—4 մարդու չէր մօտենար և չէր այլ կարող մօտենալ: իսկ թուրքեր, յոյներ նշանակութիւն չունէին իր մօտ: շատ անդամ սպառ-

Նալիքով լուր կը զրկէր այս կամ այն մարդուն  
իրեն եղ, կով, իւղ ևն. զրկեն. անթերի պիտի  
կատարուէր: Խալտբանայէտ օղի հարուստ յըյ-  
ներ Աբրիեօմի երկիւղէն իրենց տանց շուրջը  
պարիսպ քաշեցին, զէնքեր ևս պատրաստեցին  
գիշերն՝ երբ Աբրիեօմ գայ՝ սպաննեն: Աբրիեօմ  
լսեց այս. մի օր ցերեկ ժամանակ յանկարծ կը  
մտնէ նոյն յոյներու տունը, կը տեսնէ զէնքեր  
պատէն կախած են, յոյներ ևս տունը նստած.  
բարձր ու խռպոտ ձայն մի հանածին պէս յոյ-  
ներ սարսափահար կը սառին մնան: Աբրիեօմ  
կը պահանջէ փող. յոյներ առ ահի հորուսած տե-  
ղէն կը հանեն, մի մասը կըտան Աբրիեօմին: —  
Կիսս վարտիք չունի, ձեր վարտիքները հանեցէք  
տուէք, կասէ յոյն կանանց: Կանայք անմիջա-  
պէս կը հանեն, կըտան: Աբրիեօմ առանց զէն-  
քերու գիպշելու կը մեկնի: —Պահեցէք, կասէ,  
զըյափ-մըյափ կը զարնէք, որ զարկիք մորթը  
ինձ պիտի տաք կասէ ու կը մեկնի առանց յետ  
նայելու:

Աբրիեօմ գիտէր յոյներու երկստութիւնը,  
նա մանաւանդ որ ձախ բազկէն կապած էր մի  
բազբանդ, որ իր նախնիքներէն մնացած էր. ով  
որ այդ բազբանդը ունենար իր մօտ, նորա վրայ  
գնդակ չէր բանիր: Յոյներն ևս տեսան այդ բազ-  
բանդը. մտածեցին, եթէ գնդակ չբանի: Աբ-  
րիեօմ յետ կը դառնայ, զիրենք ընտանիքով կը  
կոտորէ:

Ռանը բազբանդը չէր, այլ Աբրիեօմի դա-  
ժան գէմքի սարսափին էր, որ աղդեց յօյներու  
վրայ. որոնք բոլորովին իրենց ուշը ու յիշողու-  
թիւնը կորուսին. ձայն ծպտուն չհանեցին:

Աբրիեօմի կինն ևս սկսաւ շապիլ ապրիլ.  
ինքն ևս մի ժամանակ տունը նստաւ կողոպտած  
փողերը սկսաւ ուտել. կերաւ ու վերջացաւ:  
կինն այլ աւելի լու վարտիք ու շորեր պահան-  
ջեց: նա այս անդամ գնաց Զեփանող հայ գիւղն.  
պատուիրեց՝ ով որ հարսանիք անէ, մի քոփ  
գութնի (խոյտ—մետաքսէ գործուած) պէտք է  
իրեն համար տաց: Այդտեղէն ուրիշ զիւղ գնաց.  
իր պիտոյքը հոգաց, վերտգործառ իր տունը հետը  
տանելով հինգ կով:

Նա կովերը պահպանող չէր. մի ամսուան  
մէջ հինգն ևս մորթեց, կերաւ իր ընտանիքի հետ,  
մի մասն այլ բաժանեց բարեկամներուն: Այս  
անդամ մի ուրիշ զիւղ գնաց, նորնպէս հինգ  
կով բերեց: Կովերն անձանօթ ճանապարհով  
չէին գնար, այս ու այն կողմ խոյս կտային.  
յանկործ բարկացաւ, զարազութիւնը քաշեց, հա-  
րուածներու ներքին հինգն այլ սպանեց, թողեց  
մի ուրիշ զիւղ գնաց:

Այս անդամ մի թուլքի զիւղ գնաց. մի  
տան մէջ կերաւ, խմեց զինին, զլուխը երբ տաքտ-  
ցաւ՝ հրամայեց, երեք եղ ուրս հանեցին. յանձ-  
նեցին Աբրիեօմին, որ տանէ. Աբրիեօմ հրամա-  
յեց, որ տէրը քշէ մինչև իր զիւղը տանին: Տէրը

քշեց. իսկ երբ խիտ անտառի մը մէջ մտաւ խոյս տուեց, անյայտացաւ։ Աբրիեօմ ընկաւ ետեէն, չտեսաւ. մի վերստ հեռուն աչքին առաւ, յանկարծ հրացանը կրակեց, թուրքը ընկաւ։ Ինքը ստիպուեցաւ եղները քշել տուն տանիլ։

Աբրիեօմի գլխաւոր պաշտպանն էր իր Յուսէփի եղբօշ որդի Նահապետը։ Սա թէ քաջ, հընարագէտ և թէ խելօք մէկն էր։ — Ե՞նչ անենք, ամեն մարդ իր յիմարը ջուր չձգեր. Աբրիեօմ ևս Յուսէփցոց Խըլառն է, պէտք է պահպանել։ Նահապետ յարգանք կը վայելէր ամբողջ իր ցեղին մէջ. որով Աբրիեօմ Նահապետին վահան կը համարէր իր շուրջը. ուղածը կանէր։

Նա միսմինակ կը գնար, 2—3—5 օր կանյայտանար։ «Խըլառը գնաց կորաւ, կասէին. Սուտուած տար մէ տեղ շան պէս սատկեցնէին, մեր հոգին ազատիր»։ Իսկ երբ յանկարծ երեան կը դար՝ «Մէջը սատանայ կայ, սատկելիք չունի», կասէին։

Աբրիեօմ երկար տարիներ առանց ընկերի շարունակեց աւազակութեամբ պարապիլ. իրեն ընկեր այլ հարկաւոր չէր. ուր որ գնար, մէկուն կը հրամայէր իրեն ծառայել. ինքն այլ ետեէն կերթար, կարծես մի վաճառական լինէր, մշակներ վարձած։ Շատեր դոհ կը լինէին, իրենց ապրանքը տանէր՝ զիրենք չտանէր, որպէս զի չտեսնէին իրենց աշխատանքը — ոիրելի եղները

կամ կովերը և կամ ջորին իրենց առաջ, իրենց ձեռքալ անդուժ բռնաւորին յանձնել։

Մի անդամ ևս մի հայի կսպաննէ, երբ նա անտառին մէջ խոյս տալու վրայ էր։ Այս անդամ ստիպուած ինքը քշեց. եղներու մին սպանեց ճանապարհին ուղիղ չքայլելուն համար, միւսները քշեց բերեց Սարայներ կոչուած թաղը. այդտեղ աղբիւրի վրայ լուացք կանէր իր հօրեղբօր՝ որ Քէօր օղլի ևս կը կոչուէր, աղջիկը նորա հրամայեց, որ եղները քէ, տանէ մինչև տուն. Աղջիկն ուղղեցաւ, սկսաւ վրան ծածկեց, քշտած շորերը կարգի դնել, որ հրամանը կատարէ. իսկ նա արգէն յոգնած ու զայրացած էր. այս անդամ աւելի զայրացած՝ յանկարծ դանակը կը քաշէ, մի հարուած կտայ-կսպաննէ։

Աբրիեօմ եղները տուն կը տանէ ու անմիջապէս տնէն կը հեռանայ. կը մտնէ անտառին խորը և կը դէշերէ։

8.

Աբրիեօմ մտածեց, որ արածը վատ էր. նա շատ մարդ սպաննած էր, կարևորութիւն երբէք տուած չէր, սակայն այս անդամ հասկացաւ թէ բանը որտեղն է,

Սպաննուած աղջկան հայրը՝ Քէօր օղլին մեծ անուն ու համբաւ կը վայելէր Յուսէփցոց ցեղին մէջ. ամբողջ Յուսէփցիք անով կը պարծենային,

որ նո էր իրենց ցեղին մէջ խելքով ու հանճառ  
ըով. շատ անդամ նորա խորհուրդին կը գիշ  
մէին երբ լուծելի խնդիր մը ունենային,  
կամ վէճ:

Յուսէփցիք այլ ևս Աբրիեօմի գէմ տաեւ  
լութեամբ լցուեցան. զինուեցան նորտ գէմ. կու<sup>1</sup>  
րոնէին մի յար'ար տեղ սպաննելու: Նոհաղետ  
ևս չէր կարող պաշտպանել. վասն զի տեսաւ,  
ամենէն քաջ ու ազգեցիկ Յուսէփցիք զինուած  
են նորտ գէմ. ինքն ևս չեղոքացաւ և սկսաւ  
Աբրիեօմի վատ վարմունք: պարսաւել:

Այս անդամ Յուսէփցիք իրենք կուղէին  
սպաննել. եթէ Ակոր, Պողոս օղիներէն մին հաւ  
մարձակէր սպաննել և կամ սպաննելու մի փոշձ  
փորձէ, պիտի պաշտպանէին Աբրիեօմին. նո  
մանաւանդ ո՞ս միւս ցեղի հոյերէն ոչ ոք չէին  
կարող համարձակեր այդպիսի քայլ մը անել  
թուշքերն իսկ, նոյն իսկ երկրի կառավարիչ  
Շամբը օղին:

Խըլտուը այլ ևս Շամբ, Շինկիլայ, Կիւշու-  
նոյ և Սարտյներ չէր կարող երիալ. վասն զի  
այդ տեղեր Յուսէփցիք կը բնակէին. սկսաւ Սա-  
մարուքսոյ, Կառմիլա, Սովուքսու, Զեփանոզ,  
Վաքուֆ, Կալտֆիլայ, Ֆիրինծուտ, Ապրիեօն և նո-  
հեռու տեղեր գնալ գտը

Նո ձի նոստիլ ինչ է՝ չէր գիտեր. ամեն տեղ՝  
ուր կերթար, սովով կերթար. կը հաստատին թէ  
ձիտուը նորա առջևէն չէր աղատիր. քանի ան-

գամ ձիաւորը սպաննած և տեսած է ձին սրբն-  
թաց կը փախչի, վազելով ձին բռնած է: Նա  
այսպիսի սղընթաց վազելու միջոցին զնդակը  
ուր ձգէր՝ նպատակին կը զարնէր. երբէք նարա  
գնդակը դատարկ անցած չէ:

Մի օր նորա միտքը կդայ որ քանի գիւղե-  
րու վրայ զութնի տուրք գրած է. ճանապարհ  
կընկնի կերթայ Զեփանող. կը պահանջէ Օվակ  
օղի Սաղգիսէն, ինձէ օղի Յուսէփէն, Թօնեալի  
օղիէն (որոց յահճնարարած էր իւրաքանչիւր  
հարսանիքէ մի մօփ զութնի հաւաքել). նո-  
քա կը յայտնեն թէ մոռացած, չեն հաւաքած:  
Աբրիեօմ կը զայրանայ, կը հրամայէ անցնին իր  
տուած: Կընկնին տուածը, կերթան. Գասպար օղի  
Գրիգոր կզզայ որ փոքր ինչ ներքիը Թօնեալիին  
ջրաղացքի լճակը կայ, պիտի ձգէ լճակն ու  
խեղգէ. կերթայ Աբրիեօմի տուածը, կը լոնդրէ,  
որ ներէ, ինչ որ հարկն է քեզ կը զոհացնենք,  
կասէ:

Աբրիեօմ ներել բառն երբէք չէր գիտեր.  
Հդիտեմ ինչպէս կը լինի՝ կը ներէ. զայն կը գու-  
հացնեն, ճանապարհ կը գնեն<sup>1)</sup> զութնի փո-  
խարէն ջորի մը և գրամ կտան:

1) Գասպար օղի Գրիգոր՝ մօլս հայրն էր. 120—125  
ապրեկան մեռու այս քանի տարուան միջոցին, նա ինձ  
պատմած և պարծանքով տսած է թէ «ես այլ քաջ էի,  
ինչպէս Աբրիեօմի ձեռքէն աղատեցի նրանց» ևն:

Յուսէփյոց Աբրիեօմի վրայ ունեցած ատեռլութիւնը հեռու գիւղեր ևս լսուեցաւ, քանի Յուսէփյի վերին աստիճանի ատելութեամբ լըցուած էին նորա գէմ. լուր յղեցին ամեն տեղ, որ պատահի՝ սպաննեն ինքն ևս կասկածութիւն մը ունէր, այլ ևս աղատ աւազակութիւն չէր աներ, անտառները կը բնակէր, երբեմն գաղանի՝ քիչ անդամ յայտնի կողոպուտ կը բերէր, կը յանձնէր կնոջն ու առն չէր մը նար, կերթար:

Ճանապարհի եղերքը գտնուած անտառներու մէջ կը մնար, այնպիսի գիրքի վրայ կը նստէր որ ցածէն—ճանապարհէն անց ու գարձ անողը տեսնէր, կողոպտէր:

Յուսէփյիներէն նա միայն Նահապետի տունը կերթեեկէր, նա ևս մի օր ասաց.—Հօրեղբայր, մինչև հիմաց ինչ հասկացար արածէդ, արի, թոյլ տուր այդ վատ ընթացք. մի օր կսպաննուիս:

—ԱՌ պապամ, ասաց, նոր թողում, այլ ևս նետը աղեղէն գուրս ընկաւ, գիտեմ, ինչպէս ևս լինի ինձ պիտի սպաննեն Յուսէփյիք:

—Ես կը միջնորդեմ, մի հնար կը գտնեմ,

քիչ մը հանգիստ կայ:

—Տղա, աչքս որ վատ մարդու առաւ, ինչպէս համբերեմ. ինչ կանեմ, վատ մարդեր աշխարհի երեսէն կը մաքրեմ:

Դինիի տիկը Աբրիեօմի հետ էր, լեցուց,

գնաց անտառի մէջ ուրիշ մի յարմար վայր գտաւ, ոկսաւ խմել:

Մի անգամ նա տեսաւ երկու մօլլա, որ ճանապարհով կերթային, որոց կանչեց իր մօտ, կուշով գինին տուեց որ խմէ, մօլլան ձեռքով վերցուց, ասաց. «մուպարէք» (օրհնած) ու գրեց գետին, այս անգամ միւս մօլլային տուեց.—Հարամ է (անիծած, արգիլուած), ասաց մօլլան և ոկսաւ դժկամակիլ:

—Մօլլա, ասաց Աբրիեօմ: կամ գինին պիտի խմես, կամ զիս պիտի շալակես, ապա թէ ոչ հարուածը կը դայ, հա:

—Քեզ կը շալակեմ, ակա, ասաց:

Շալակեց, փոքր ինչ տեղ տարաւ, շատ ճանր էր, հեվալով ասաց. Ակա, զինին կը խմեմ: Զեռքը առաւ որ խմէ.

—Մուպարէք, ասա, ասաց, հա գլուխդ թռաւ, հա:

Գինին խմեց ու գնացին երկուքն միասին:

Քիչ ցած ինան, չիջան մօլլան ընկաւ, ոկսաւ, գոռալ իր լինկերով. —գինի բերէք խմեմ, այդ ինչ անուշ բան է:

—Մովորեցար այ շուն մօլլա, ասաց ու հըրամայեց որ միւս մօլլան շալակէ զինք, մինչև իր աչքէն անհետացաւ:

9.

ՇԱԹՐ ՕՂԻ ԿՈՉՈՒԱԾ

Շաթր օղի կոչուած թուրք գերդաստանը այդ ժամանակ անուանի է։ Շանայ գիւղի արեւելեան կողմ մի բարձր բլուրի գագաթին վրայ էր իրենց պալտալ - սարացը, որ այսօն այլ կայ։ Այդ ցեղի երկու եղբայրները կիշխէին Տշապիշոնի Յօմուրա կոչուած գաւառին, որ 2-3 տառը ճանապարհ կը տարածուէր յարկամից յարելու ընդ ծովու։

Շաթր օղի իբրահիմ բէկի մեծ եղբայրը Տրապիզոնի կուսակալութիւնը ձեռք ձգեց՝ փոքր եղբայրը - իբրահիմ կը կառավարէր Յօմուրան։ Սա գժատած էր նոյն ժամանակ Միւրմենէ գաւառի վրայ իշխող Խալիլ բէղի (բէկ) հետ։ Այս պատճառաւ Աբրիեօմի պէս քաջ մարդու պէտք ունէր, չաւաքեց չորս - հինգ հարիւր ընտրեալ պատերազմողներ, Աբրիեօմին ևս լուր յղեց, բերել տուեց, գնաց Խալիլին յաղթեց ու վերագարձաւ։ Աբրիեօմ Յուսեփցոց սպասնալիքէն աղատուելու համար նաև Շաթր օղուն հաճելի գաւնալու համար գիշեր ժամանակ գնաց, մի կերպով մտաւ Խալիլի պատերազմիկներու մէջ, Խալիլի եղբօր գերի բռնեց, ձգեց առաջը, հետեւցաւ նորան։ Այս որ խմացան կոռուզները ընկան Աբրիեօմի

Համեէն՝ Աբրիեօմ գարձաւ կոռուզներու վրայ։ 7-8 հոդի սպաննեց ու հետեւցաւ գերիին, մըտաւ անտառին մէջ, յառաջացաւ։ Պատերազմիկներն անտառի առաջի ճանապարհներու, անցքերն կուրեցին։ Աբրիեօմ ճանապարհը շեղեց։ Ճորի մը մէջ հրացանի քանի պայմիւն հանեց։ — Այդ վուրուլում (զարնուեցայ) դուռաց Խոռոշ գարկուները ձայնի կողմ հաւաքուեցան որ գերին աղատան, իսկ Աբրիեօմ գտաւ իր ապահով ճանապարհը, գերին անտառի միւս կողմէն գուրս հանեց, գտաւ իր ծանօթ ճանապարհը, արագագագայլ գնացին։ Նա ճանապարհին մի անմեզ մարդկաս սպաննեց որ իրենց ուր լինելն չյայտնուի։ Լոյսը բացուեցաւ։

Զորս Ժամ ճանապարհը շարունակեց Աբրիեօմ, ընկաւ իր ծանօթ վայրերն, խորդարկութը մի ժամ հեռաւորութեան վրայ տեսան Աբրիեօմը, ամէն ջանք ի գործ դրին առաջը կարել, սակայն Աբրիեօմ գիտէր կտրուկ ճանապարհներն, ուր կարող էին հասնիլ։ Աբրիեօմ շատ յոդնած էր, մի բարձր բլուրի դադաթի վրայ կանդ առաւ, ձայն տուեց թէ գերին ապահովէ, հոգ մի քաշեք։

Այդ տեղ կրծքի երկար մաղերը ձեռքով բռնեց, քաշեց, կաշին բարձրացուց, խոր շունչ մի քաշեց, շարունակեց գնալ։ Խեղճ գերին այլ ևս գնալու անկարող էր, կամ պիտի սպաննէր, անքը խոյս տար կամ հետը պիտի տանէր, տեղինքը խոյս տար կամ հետը պիտի տանէր, տեղաւայիկ ուշէ ընկած է։ տեսնուած բլուրի ձախ

կողմը մի խիտ անտառի մէջ իջան, սրլեցանք  
չետեւղները բլուրէն անցան, ամեն կողմուն  
զարկեցին, չդժան, գարձան յետ գնացին Սիւր-  
մենէ, եղածը յայտնեցին Խալիլ բէղին:

Աբրիեօմ նոյն գիշերը հանդստացաւ հետեւ  
եալ երեկոյին գերին հասցուց նախը օղուն  
ատեանը.—Բէղ, ասաց Աբրիեօմ, Սիւրմենէի մեղը  
գովական է, քեզի տիկ մը մեղը բերի:

—Աբրիեօմ, արդարն ասա, այդ ինչ մարդ է:

—Բէղ, կասէ գերին, Խալիլ բէղի եղայրին և մ-  
նախը օղին Աբրիեօմի ուսերուն զարկեց  
ու շատ ապրին, ասաց, սա մեղք չունի, սուտ  
եղբօր կարող ես բերել:

—Այդ իմ գործն է, միայն քո աչք իմ վրայ  
լինի, իմ աղղականներ ինձ չփառեն:

նախը օղին քանի Յուսէփցի կանչեց,  
սպասնացաւ որ Աբրիեօմին ձեռք չտան, մի վասնգ  
հասնի, կը պատժուին:

Խալիլի ու իբրահիմի մէջ հաշտութիւն կա-  
յացաւ, գերին պատուով վերագարձուցին Սիւր-  
մենէ: Խալիլ Աբրիեօմի արած քաջադործութիւն-  
ները լսած լինելով իբրահիմէն խնդրեց որ  
Աբրիեօմն իր մօտ զբկէ, տեսնէ թէ ինչ տեսակ

Աբրիեօմ աներիիւղ գնաց, ներկայացաւ Խա-  
լիլ բէղին, շատ պատիւ ստացաւ: Քանի օր մնաց\*  
Խալիլ կանչեց իր մարդիկներն ու ցոյց տուեց  
Աբրիեօմը, ասաց.—Զեր 500 մի կողմ, այս մի կողմ:

Այդտեղ մի թուրք Աբրիեօմի վրան սէր կը-  
ձգէ, նորա հետ կդան Եօմուրա, միջոց մի աւաշ-  
զակութեամբ կը պարապին: մի օր ևս Աբրիեօմ-  
այդ թուրքին կսպաննէ: Գինով ժամանակ թուր-  
քին ասած կը լինի: «արի, զիս շալակէ, տար»:  
Նա ևս ասած կը լինի:—Զեմ կարող դու ծանր եա-

Աբրիեօմ թէև բէղին վստահ, սակայն լսեց  
որ օր օրի վրայ իր գէմ որոգայթներ կը լարուի-  
նորա հօրեղբօր որդի Վարդեվան, որ առ ոչինչ  
կը համարէր Աբրիեօմը, լարուեցաւ նրա գէմ-  
Վարդեվան ուր և գտնուէր, Աբրիեօմ այնտեղ  
չէր կարող մտնել: յիմարը ինչպէս յիմարապահէն-  
երկիւղ կը կրէր, Աբրիեօմ ևս սաստիկ կակնածէր,  
նորա մօտ չէր համարձակեր մի բան խօսիլ նախ-  
քան այս գէպքերը, իսկ այժմ աւելի երկիւղ կը  
կրէր, ինչպէս մուկը կատուէն, միւս կողմէն իրեն-  
սիրտ կտար, գիտնալով որ նախը օղին իրեն-  
պաշտպան է:

Վարդեվանի սուր ու խլացուցիչ ձայնը ուր  
և լսէր, Աբրիեօմ խոյս կտար, այնտեղ այլիս  
չէր տեսնուեր:

Աբրիեօմ լսեց որ իր հօրեղբօր որդի Փիլոս-  
հետը առնելով քանի երեկի Յուսէփցի՝ գի-  
մած են նախը օղուն որ Աբրիեօմի կետն-  
քին վերջ տայ, վասն զի, գիշեր, ցերեկ, կա-  
սէին, իր վատ և անբարոյական վարժունքով ժո-  
ղովրդեան ատելի գարձած է:

Ժողովուրդը տեսաւ որ վոխանակ Աբրիեօմին

պատմելու աւելի կը յարգէ, այս անդամ հայ թուրք, յոյն հետերնին առին, միատեղ դիմեցին Տրապիզոն Շախը օղլու մեծ եղբօր, խնդրեցին որ զայէ, կամ սպաննել տայ:

Ժողովրդեան բազորը լոեց կաստկան, համապրեց եղբօշը որ յազովրդեան արգար բուզոքը չէ, Սրբիեօմը կալանաւո՞է տռանց սպաննելու և իր մօտ զրկէ:

Սրբիեօմն էր ու հինդ դիւզ, որ մի այս գիւղի, ուրիշ օր մի ուրիշ զիւղի մէջ էր, միայն կիւշանայ չէր համարձակեր մանել, վասն զի Վարչ գեվան այնաւեղ ներկայ էր:

10.

### Տ է Բ Կ Ա Բ Ա Պ Ե Տ

Աշունը վերջանալու մօտ էր, Սրբիեօմ լոեց որ Փիլոս և քանի Յուսէփցի գիւմած են Շախը օղլու մեծ եղբօր ի Տրապիզոն, զգաց որ վասնդը մեծ է, չէր կարող գիւղերու մէջ երեալ, չէր կարող ձմրոն ցրտին անտառներու մէջ ապաստան գանել, թէն երբեմն այլ և այլ կասկածներու տակ ստիւ պուած էր անտառներու ծառոց խոռոչներու մէջ գիշերել, սակայն գինեմոլութիւնը, որկըամոլութիւնը անտառէն գուրս մղեցին զինք, գարձեալ սկսաւ անպաշտպան տներու վրայ յարձակուիլ ու կողապտել:

Մի օր ևս կը լոէ որ տասնի չափ ենիշերէ ներ քանի Յուսէփցի հետերնին առած՝ կորսնեն զինքը, որ կալանաւորեն, նա ոյլես բոլորովին յուստահատած՝ սկսաւ ամեն մարդու վրայ կասկածով նոյիլ, նա կը կարծէր թէ հողը, բոյսը, անտառը ելն, ոխակալուած են իր գէմ, վատահ չէր ոչ մի աղդականի վրայ, բացի նահապետէն: Կը կարծէր թէ մի օր քնած տեղը պիտի սպաննեն զինք, շատ անգամ զիշերները անքաւն կանցնէր, մի փաք, խչոց կամ ձայն զինքը կը վրդովէր, զանակը քաշածին պէս ձայնի կողմը կը խոյանարա սորտ համար եթէ բարեկամ ևս ունէր, չէր համարձակեր մօտենալ և մի դիտողութիւն անել:

Ոչոշեց մի առ ժամանակ Խալիլ բէզի մօտ զնայ, ապահով անցնէ մինչեւ ձմեռը վերջանայ:

Իր կարիքի կարեոր մասը պատրաստեց, իր սիլահուղը, որ Տրապիզոնի ամեն զիւղացիք ունին, կտպեց մէջքը:

Նոյա սիլահուղը աւելի բարդ էր, մի մէջ կտպ վոկի կիսուն վրայ 4—5 խու կաշի կարտած էր, երկու թիզ երկարութեամբ, մի թիզ լույսաթեամբ, տակի տուաջին խուի մէջ հաստատած էր եշկու խոչոց տարճանակներ այլ և այլ մասերն արծոթապատ, երկրորդ խուի մէջ  $1\frac{1}{2}$  կանգուն երկաշութեամբ հաստ ու կեռ դահնակի, երբորդին մէջ ծխախոտի չպաւին, կրակ վերցնելու ունելին եին, չորրորդին մէջ զաւլուի կոչուած քսակին, որ մէջը արէթ, կայծհան, կայծ

քարեր, որ հրացանի համար ևս կը դործածէր։ Այս խաւին մէջ էր նաև գրամի քսակն և ուրիշ մանր մունր դործիքները հրացանը քանդելու և մաքրելու։ Մեծ մաժարան մի կողմէն կախած, մաժարայի մօտ ձախ ազդիքի վրայ կախուած էր թափով (պատեան) փոքրիկ դահակը մշտական դործածութեան համար։

Մեծ բիր մը ձեռքը առաւ նա և ճանապարհ ընկաւ։ ձենը արդէն մի թիզ թանձրութեամբ երկրի երեսը պատած էր, գնալու միջոցին առատ ձիւն ևս տեղաց. ճանապարհը անհշմարելի դարձաւ, որով ճանապարհը թողեց, դարձաւ դէպի աջ, ուղղեցաւ մօտակայ կալաֆկայ կոչուած հայաբնակ գիւղն։ Գիւղի մէջ ցոյց տուին նորա, որ Տէր կարապետի տանը օթեանի։

Այդպէս այլ արաւ նա. գնաց դուռը բիրով բացաւ. խոպոտ ձայնով ասաց.—Տէրտէր, խոստովանելու եկած չեմ, քամին զիս քշեց. Քահանայն անմիջապէս ճանաչեց, ասաց.—«Գուրպան օլայիմ թիփիյա, սիւրտի կէթուրտի դափիյա»։ (մատազ լինիմ այն բքան, որ քշեց ասրցուց մեր դռան)։ Աստուած օրհնէ այն քամին, որ քեզ մոլորեցուց, մեր տունը ձգեց։

—Տէրա, ասաց Աբրիեօմ, կաշխատիս գլուխս աւետարանի տակ դնես։

—Աբրիեօմ, Աստուած որ քեզ բերեց մեծ Տէր կարապետի բուրակի շուրջը, դլուխտ ալ

աւետարանի տակ պիտի դնես, զու ևս պիտի մտնես, պիտի տեսնես ինչ կայ աշխարհ։

Աբրիեօմ կուրծքը կրակին տուեց, ծխուամործը ծխախոս լեցուց, իր ունելիով կրակ մը մինչև վրան դրեց, տէրտէրն ևս զուց մը դինի առաջը դրեց, ասաց.—Խմէ մեծ Տէր կարապետի յիշատակին, ախ, սկ լինի այն օրը, որ նահաւտակեցին։

—Նահատակիներէն ես խոյս կտամ, աչքիս առաջ կը բերես։

—Ասել կուզէ մեծ Յուսէփ պապին ալ չես ուղեր։

Աբրիեօմ լսած էր որ Յուսէփ պապ մը եղած էր. ինքը, ամբողջ Յուսէփիկը նորա սերունդն են, ուրիշ ոչինչ չէր գիւտեր։

—Յուսէփ պապ, ասաց նա, ինձ պէս մի մարդ ճնած է, քու Տէր կարապետ ինչ արած է։

—Աբրիեօմ, զու բան չգիտես, մէկ օր քեզ կը պատմեմ թէ ինչպէս Զատկի գիշեր հարիւրաւոր հայերու հետ սպաննեցին Տ. Կարապետը, ի Սև գետ ինչ սոսկալի կոտորած եղաւ, փախուստ տուող հայեր ինչ գառն տանջանքով անտառներու մէջ ապրեցան։ Ապա կը պատմեմ թէ քու մեծ Յուսէփ պապի գլխուն ինչ փորձանք եկաւ։

—Տէրա, ինկի մոմի լոյսը իմ աչքեր կուրացնէ, եթէ այդ քու ասած խօսքեր իմ գըլուխս մտաւ, ասաց նա։

Աբրիեօմ կը դայլրանար այն ժամանակ, երբ

հանդէպինը շատ խօսիր, չգիտեմ ինչու այս անգամ՝ լուեց միտյն, այլիս չխօսեցաւ:

Աբրիեօմի զինւոյ գուշը դատարկ էր արդէն։  
— Քա, իրիցկին, գուշը լից, ինծի էլ լից  
ու ըիր, ասաց տէրան։

Աբրիեօմ՝ լուռ ու մունջ մի քիչ մտածեց։  
Նու մտածել չէր զիտեր, տէրան հասկացաւ որ  
Աբրիեօմ զինքը ապահով կղղայ այս զիւզին մէջ,  
այն պատճառաւ որ այսուեղ Յուսէփցի չկար,  
ուրիշ զիւզացի հայեր ևս երկիւր կը կրէին իրմէն։  
— Ես դիտեմ ինչ կը մտածես, ասաց տէրան։  
այդ անցու։

— Տէրա, ասաց Աբրիեօմ, այնորիսի խօռք  
առա իմ զլուխ մտնէ, ասաց Աբրիեօմ, սակայն  
ինքը կը մտածէր թէ Սև գետ ինչ եղած և կամ  
ինչու համար կստորած պիտի լինի, նումանտանդ-  
անոր համար կը մտածէր ինչ մեծ Յուսէփ պատ-  
է նոհաստակւողը, ինքը միտյն դիտէ, մէկ Յուսէփ  
պատ, որմէ սերած են Յուսէփցիք։

Աբրիեօմ քանի տմիո ձմեռեց և հիւրտուիր-  
ուեցաւ Տէր Կարապետի տունը, հոնդիստ կը  
քնէր, անկասկած գուրուը ման կդար։

Նու իմացաւ որ Տէր Կարապետի տունը նուի-  
րական տուն է, զիւզացիք տմինքը յարդանքով  
կը վերաբերուէին այս տանը, նոյն իսկ նոհաստակի-  
մացորդին ուրի պէս կը պաշտէին։

Կործես Աբրիեօմ հետղհետէ կըզդաստանար-  
Աբրիեօմ հետղհետէ փափաք զգաց իմանալ

թէ ինչ անցքել անցած են Սև գետ և Մալա,  
սակայն մի անդամ ասած էր թէ «իմ զլուխ  
չմտներ», գորա համար ալ չէր ինգրեր որ ասէ։  
Իսկ տէրան ևս խելքով էր, մի երեկոյ խօսքը  
իրիցկինով ուզզելով պատմեց թէ Սև գետի անցքը  
և թէ Մալա գիւղի անցքը, բայց հետաքրքրական  
տեղեր բաց թողուց։ Աբրիեօմ լուռ ու սունջ  
հետաքրքրութեամբ կսպասէր թերին լրացնելու,  
բայց տէրան՝ զինին որ առաջը դրուած էր, վեր  
վերցուց, խմեց, նոյնը առաջարկեց Աբրիեօմին  
և խօսքը ուրիշ կողմը դարձուց։

— Ծօ, Աբրիեօմ, ասաց տէրան, ինչ կողնած  
կաշիս, խմէ, խորաթէ, խաղ մը ասէ, ինչի մը  
էրէ, քու մեծ Յուսէփ պապը եղմօն սուս ու  
փուս նոսուշ չէին զիտեր, դավուլ զուռնայ չալէին  
կու, դուն ում էլած իս։

«Դավուլ, զուռնայ չալել» բառեր Աբրիեօմ  
իր նախնիբներու համար անպատութիւն հա-  
մարեց, խիստ բարկացաւ, ձեռներն դողդողաց,  
տարաւ գանհակին մօտ որ քաշէ, մի հարուած տայ  
տէրային, սակայն յանկարծ իր կատաղութիւնը  
զսպեց, զգաստացաւ մտածեց. «Եթէ կայ մի մարդ-  
որ իմ վրայ չարիք չխորհիր, այն ալ այս տէրան  
է, ինչ ալ ասելու լինի, պէտք է համբերել»։

Տէրան կէս կատակ, կէս լուրջ ասաց. — Ա՛յ  
Ա՛բրիեօմ, Ա՛բրիեօմ, ինչ ասեմ պղտիկ Յուսէփ  
պապուն որ քեզի պէս խըլառ սերունդ ունի,  
հիմա մեր գլուուն փորձանք դարձած ես։

— Տէրամ-տէրամ, ասաց Աբրիեօմ, երեխ դու  
Աբրիեօմի աշածները չես լսած, ժողովէ քեզի,  
հա ելայ, հա:

— Հա, Աբրիեօմ չլինի նեղացար. ապա ես  
ով եմ. լսած ես Տէր Կարապետ՝ քո դիմաց  
կանգնած է, հա:

— «Տէրամ, տէրամ, աշէ թեւերուդ վրայ, սիմն  
էկած է արևուդ վրայ», դու ինչպէս իմ եօթ  
պապ կը քամահրես:

— Ես տէրտէր եմ, քեզ կը քամահրեմ, իսկ  
կօրհնեմ այն մեծ Յուսէփ պապը, որ իմ պապու  
պէս արխւն թափեց, ահա:

— Տէրամ, ասաց, դիտեմ, լեզուիդ տակ մի  
բան կայ, ասա, հոգիս բերանս հանեցիր, դիտես  
որ համբերութիւնս կարճ է:

— Զէ, չէ, Աբրիեօմ, չլինի նեղանաս, ես  
կատակ կանեմ:

Աբրիեօմ մեղմացաւ, յուշիկ յուշիկ կակա  
զացաւ, եղաւ բանբակ:

Մի օր ես տէրան ասաց.— Քա, իրիցին,  
գնա ձիռ թամբը բեր:

— Ի՞նչ պիտի անես, այ տէրտէր:

— Զարնեմ այս մարդու վրայ:

— Վայ, մեր տէրտէր յիմարացած է, մարդ  
հիւրին միթէ այդ տեսակ բան կասէ: Դարձաւ  
Աբրիեօմին ասաց.

— Եղբայր, չլինի նեղանաս, մեր տէրտէրն է,  
կատակ կանէ:

Մառանի մէջ քաշուած կապրէլն ընտանիքը  
(տէրտէրի ընտանիքը), նոքա ամեն խօսակցութիւնը  
կը լսէին, դառապայի (առախտակորմ) ճեղքերէն կը  
դիտէին, կը զարմանային թէ կատաղի Աբրիեօմ  
ինչպէս կը համբերէ: Կային որ «մարդասպանուա-  
թեան հոտ կդայ» կասէին, կային նաև մտածող-  
ներ թէ «մեծ Տէր Կարապետի օճախի սուրբ  
շնորհըն է, Աբրիեօմ խելահացաւ, այլևս բան  
չաներս: Մին կօրհնէր Տէր Կարապետի գերեզմանը  
որ այս գաղանաբարոյ մարդուն վրայ հրաշք գոր-  
ծած է, մի ուրիշը ուրիշ կերպ կը մտածէր:

Մակայն Աբրիեօմ ազգուած տէրայի խօս-  
քերէն, ընկղմած էր խոր մտածման մէջ, մի որդ-  
ծիրանները մխած նորա սրտի խորը, կը տանջէր  
զայն. աշխարհ չհաւաքուազը պյաօր տէրային  
հլու, հպատակ գարձած էր:

Գարունը նոր բացուած էր, մի երեկոյին  
կերան, խմեցին, գուրս ելան ման գալուց կուս-  
նեակն իր լոյսը սփուած էր, գնացին մի դրացիի  
գուռ, լսեցին ներու խօսողներու ձայնը, ինչ որ  
այդտեղ հանդիսի մը համար հաւաքուած բազ-  
մութիւն կար, հանդէսէն վերջը լուրջ խօսակցու-  
թիւն մը կը շարունակուէրս Խօսակցութեան նիւթն  
էր Աբրիեօմը: Ոչ Աբրիեօմը, այլ «Խլառը խելա-  
հասցած է» ամեն բերնից կը լսուէր, ոմանք կը  
վերագրէին Աստուծոյ, ոմանք Տէր Կարապետի  
գերեզմանին, ոմանք եկեղեցու «զօրքին», ամեն  
այլ և այլ հրաշքներու կը վերագրէր: Ժողոված

անձինք թոյլ տուին Աբրիեօմը, սկսան Տէր Կառապետի ու Աբրիեօմի վրայ խօսակցիլ. խօսելու նիւթը շատ հետաքրքրական էր այս երկուքի համար ևս Աբրիեօմ բաւական ծանօթութիւն ստացաւ իր նախնեաց վրայ, նոյնպէս տէրայի նախնեաց վրայ, սակայն դորանով չէր բաւականանար, աւելի ևս հետաքրքրութիւնը շարժեցաւ, այս անգամ ամենայն ուշադրութեամը մտիլ կնէր, որ մի բան աւելի լսէ, վասն զի լսած ամէն մի նախադասութիւն իր համար օգտակար էր, միայն «Խըլառ» բառը շարունակ կրկնուելուն շատ նեղացաւ, համը երութիւնը չտարաւ.—«Ես խըլառ չեմ», դուաց զայրացած. խըլառ տէրան է, տէրան։

Տանը մէջ այս ձայնի վրայ շունչ ու շնկոց դադարեցաւ, վասն զի սարսափեցան նորա խրզոտ ձայնէն սըլեցան, մնացին։

Աբրիեօմ զզջաց, վասնզի իր համար հետաքրքրական խօսակցութեան թելը կտրուեցաւ։

Այդտեղէն հեռացան, անտառի միջոցով մի ուրիշ տան դռնով անցան, ապա վերադաշան իրենց տունը։

— Աբրիեօմ, մի օր տաց տէրան, իմացած եմ որ դնալու ես Սև գետ, քեզ կտամ մի տիկ իւղ, մի տիկ ևս պանիր, տար քո տուն ու արի, միասին կերթանք, ես ևս դործ ունիմ։

Աբրիեօմ տռաւ իւղը, պանիրը գնաց իր տուն, կինը, որդիքը տեսաւ, գարձաւ։

Նա կը մտածէր թէ տէրան ինչ դործ ունի

Սև գետ, քանի որ նոքա մահմետականներ են, ինքը մօլլա չէ, այլ քահանայ, Հարցնելու սովորութիւն չունէր երբէք, մտածեց որ հետեւի իրեն, նորա ամէն շարժման ուշադրութիւն դարձնէ։

Տէրան է, հագաւ լազի նման մի նեղ զիւկայ (վարդիք), կռնակը մի կարծ ապա, գլուխն ևս ֆասի վրայ սպիտակ փաթթոց, փաթթոցի վրան ևս կուկուլան անցուց, մախախն ևս անցուց վիզէն ձախ անթի տակ, մէջը պաշար զետեղեց, բիրն առաւ ձեռքը ու ճանապարհ ընկան, գնացին։

Աբրիեօմ հետեւեցաւ տէրային, բայց չէր գիշեր թէ ինչն համար կերթայ, միայն կը կարծէր թէ մեծ Տէր կարապետի նահատակուած վայրը պիտի տեսնէ, կամ ինձ ցոյց տայ։ Այնչափ հետաքրքիր չէր Աբրիեօմ որ փորձ փորձէր հասկանալու. արդէն իր բնութեան մէջ իսկ չկար մէկուն հարցում ուղղել։

Ամբողջ երկու օր խիտ անտառներէն անցնելով Սև գետ հասան։

Տէրան երբ Սև գետը տեսաւ, ի խորոց հառաջանք մի քաշեց, քստմնելի տեսարաններու յիշատակը իր մէջ զարթեցաւ, հեկեկալով արտասուեց։ Այդ հառաջանքն ու արտասուքը խոր խոցուած վէրքերու միջէ դուրս թռաւ, որ միայն զգայուն սիրտ կարող է չափել։

Աբրիեօմ զարմացաւ թէ տէրան ինչն այդպէս արաւ, վասն զի զայն միշտ ուրախ, զուարթ տեսած էր։

Սև գետի եղրը մտան մի անտառավայր, մեծ ծառերու տակ փոքր ինչ հանդստացան, պաշտը ունէին, կերան, մի մի գաւաթ օղի խմեցին: Տէրան աչքերը յառած էր գետի այն կողմը գըտնուած բլուրի մը, տեսաւ մի կին այդ բլուրին վրայ ման կգայ, յաճախ տէրայի գտնուած ծառասատանի կողմը կը նայի: Տէրան է, անմիջապէս կանդնեցաւ, ասաց: — Աբրիեօմ, դու ուշադրութեամբ այն պառաւին նայէ, իմացիր թէ որ կողմ կերթայ:

Տէրան ըստ իւր սովորութեան, որ իր նախորդքահանաներ ևս կանէին, բիրն առաւ ձեռքը, Սև գետի եղերքն ի վեր գնաց, պատահած ծառերուն մի մի ըրե հարուած տուեց ու վերադարձաւ Աբրիեօմի մօտ, քիչ հեռուն հանեց սաղմոսը, և սկսաւ քաղել (կարդալ): Իսկ բլուրի գագաթը գտնուող պառաւը երբ տեսաւ տէրային, որ ծառերու հարուած կտար, իսկոյն շտապեց գիւղի կողմ աներևոյթացաւ:

Կերեի գա իր գիւղին մի բարի աւետիս տալու համար կը վազէր, նորա կորած սիրելի որդին էր արդեօք գտնուած:

— Զէ, գա էր այնպիսի գիւտ մը քան ամեն բան թանկագին:

Գիւղ հասաւ պառաւը, գտաւ իր հաւատակիցներն, ասաց: — Քոյրեր, օրիորդներ, շտապեցէր, տէրան եկած է, մեղ համար միւռոն բերած

է, գնանք միւռոն վերցնենք ու սրբութիւն առնենք, մեր պղծուած հաւատաքը նորոգենք:

Աբրիեօմ տեսաւ դիմացի սարէն կիջնային կդային գէպի ցած՝ կարգ մը կիներ ու աղջկներ: Երբ մօտեցան, տեսաւ նոյց ամէն մէկը ունէր հատոց ու չուան, մտածեց որ սրանք ցախ ու հորթերու համար մող տանելու կդան:

Աբրիեօմ անոնց ճանապարհին վրայ բուլը մը տակ նստաւ, տեսաւ այդ խումբը մօտեցաւ, կրօնական ջերմեռանդ խօսակցութեան բոնուած էին, միւռոնի, աւետարանի, սաղմսոի, պտտարագի, մկրտութեան և հաղորդութեան վրայ կը խօսէին, նորա զարմանքը կրկնապատկեցաւ, նա գիտէր որ Սև գետացիք ջերմ մահմետականներ են, նոյց մօլլաներն կրօնամոլ, այրերը տեսած է միշտ մղկիթ յաճախելուն: Նա լսեց որ կիներէն մին հառաչելով ասաց: — Ա՛խ լրի ծառ, դու ինչ սե օր տեսած ես, քիւր երանի այն աւուր որ քո ներքեւ հարիւրաւոր հայեր կստորուեցան Քրիստոսի սուրբ հաւատի համար, կարմիր արիւնը լցուեցաւ Սև գետը, գետը տարաւ Սև ծովը:

— Ապա ինչ տանջանքով ենիչէրիները նաև հատակեցին մեծ Տէր կարապետին, ասաց հարսներէն մին:

— Մեռնիմ քեզ, ով Քրիստոսի սուրբ հաւատ, արդեօր աչքի լուսով մի անգամ ևս պիտի տեսնենք մեր սուրբ եկեղեցին ղարդարուած, տէրան պատարագանէ, աւետարան կարգայ, տիրացուներ

Երգեն հրեշտակի նման, սաղմոս ու շարական  
երգեն, ասաց մի ուրիշը:

—Մայրիկ, կերեկ տէրան մօտ է, միւռոնի  
անուշ հոտ կդայ:

—Մայրիկ, ասաց մի աղջիկ, մեծ Տէր Կա-  
րապետ կառես Թորոսի դիւզ կը բնակէր, կդար  
այստեղ պատարադ կանէր, Թորոսին ուր, մեր  
գիւղ ուր, շատ հեռու տեղ է, ինչպէս երկիւղ  
չէր կրեր թորքերէն, կդար:

—Ինչպէս այս Տէր Կարապետ եկած է, այն  
ևս այնպէս կդար, ասաց մի ուրիշ աղջիկ:

—Զէ, աղջիկս ասաց մայրը, մեր երկրի այս  
Սւ գետ կոչուած տեղը Յ6 դիւզ ամենն ևս հայեր  
կը բնակէին, մի մասը կոտորեցին, երկրորդ մասը  
փախան, մնացածներն ևս թուրքացան:

—Ա՛խ մայրիկ, թուրքի հաւատը իսկի բան  
չէ. մօլան որ շան կը նմանի, թող մնացածներն  
ևս փախնէին կամ մեռնէին, լաւ չէր:

Պատասխան չտուեց մայրը, իրենք արդէն  
մօտեցած էին տէրային, երբ տեսան տէրան հին  
եկեղեցու աւերակներու մէջ կազօթէր. յանկարծ  
չոքեցան, գետինը համբուրեցին.—Ա՛խ, մեռնիմ  
քու քայլած գետնին, ասացին պառաւներն ու  
մտան եկեղեցին. քահանայի ոտները, հանդերձի  
քղանձներն ու ձեռքերը համբուրեցին արտա-  
սուելով: Քահանայն ևս արտասուելով օրհնեց  
տմենուն, այս անդամ ժամասացութիւնը բարձր  
ձայնով շարունակեց:

Աբրիեօմ արդէն իմացաւ գոքա տան, կովե-  
րու, հօրթիկներու կեր տանողներ չեն, այլ տէ-  
րայի ուխտաւորներն են, բայց կը մտածէր թէ  
ինչպէս Տէր Կարապետի գալը իմացած են. թերես  
կը մտածէր, մի որոշեալ օր կայ, գիտեն այդ օրը  
կդան:

Այս, որոշեալ օր կար, ամեն տարի Տէր Կա-  
րապետ պիտի գար, սակայն զանազան արդելք-  
ներ կը պատահէր, երբեմն ուշ կդար, այս պատ-  
ճառաւ կիներ փոփոխակի բլուրի գագաթէն կը  
նայէին, տեսածնուն պէս հաւատացեալներու  
իմաց կտային:

Ժամերգութեան աւարտմանէ վերջը, կանանց  
մին ասաց.

—Տէրա, մեռնիմ քո ոտներուն, այս քսան  
օր կայ, քո ճանապարհին կը նայէինք, երկու  
տղայ ևս անմեռոն մեռան, թաղեցինք, մեր հոգին  
կորուստ մատնուեցաւ, ինչպէս պիտի փրկուինք:

Տէրան ամեն մէկին հարցման պատասխան  
տուեց, միսիթարեց, մի առ մի պատուէր տուեց:

Քիչ խօսելէն վերջը չոքեցուց, պահպանիչ  
ասաց, խոստովանեցուց, կանդնեցուց որ պիտի  
հաղորդէր:

Աբրիեօմ քիչ քիչ կը մօտենար տէրային,  
տէրայի աչքը միշտ Աբրիեօմի վրայ էր, տեսաւ  
նորա գէմքը հին Աբրիեօմին չնմաներ. ձայն  
տուեց, —Աբրիեօմ, արի սրբութիւն առ:

Աբրիեօմ միայն փոքր եղած ժամանակ սրբու-

թիւն առած էր, նաև եկեղեցի մտած, այժմ տեսնելով կանանց ջերմեռանդութիւնը, աղդուեցաւ: Քահանայի կանչելուն վրայ անմիջապէս գլուխը բացաւ, գնաց չօքեցաւ առաջը, խոստովանեցաւ ու հազորդուեցաւ: — Աբրիեօմ, Աստուած թողութիւն շնորհէ, ասաց տէրան: Տէր Կարապետ օրհնեց եկեղեցու շուրջը գտնուած գերեզմանները նաև մեծ Տէր Կարապետի նահատակուած վայրը: Տէրան ինամով փաթութած մեծ շիշ մը հանեց, կանայք նոյնպէս խնամով փաթութած փաքրիկ շիշեր հանեցին: Մեծ շիշ միջին մեռոն էր, ամէն մի փոքր շիշերու մէջ քիչ մեռոն լեցուց, մեռոնի վրայ ազօթք ասաց, պատուէրներ տուեց թէ ինչպէս պիտի քսեն մեռոնը նորածին երեխաներու: Մեկնեցաւ Աբրիեօմի հետ ուրիշ գիւղ, նոյնպէս կատարեց հոգեոր պաշտօններ:

Որ գիւղը գնալու յամարութիւն ունէր, այնտեղ ուր հաւատացեալ կար, այն ամեն գիւղերը գնաց<sup>1)</sup>, ապա վերադարձաւ Աբրիեօմի հետ

1) Աբրիեօմ ասուած է՝ մեծ նահատակ Տէր Կարապետի հ—6 բդ. սերունդը որդուց որդի «Տէր Կարապետ» անունով քահանայ կը ձեռնաղբուէին. գաղտնի Սև գետ կերթային, հոգևոր պաշտօն կը կատարէին. մինչև Յ-րդ. սերունդը այր և կին կը մասնակցէին, քրիստոնէական հաւատաքը ամրապինդ կը ոլահէին. տակաւ առ տակաւ մօլլաներու, ենիշէրիներու ապուցութեան ներքոյ թուլացան, մնացին կանայք, որոնք գաղտնի կը պաշտէին քրիստոնէութիւնը: Չղիտեմ, ինչպէս եղաւ, Տէր Կարա-

կալաֆիւյ: Աբրիեօմ գնալու էր Խալիլ բէղիմօտ, որ Սև գետի ստորին մասերու մօտ տուն ունէր և շատ անդամ Սիւրմէնէ կը բնակէր. կը կառավարէր թէ Սիւրմէնէ և թէ Սև գետի ժողովուրդը. բայց չգնաց: Նա միտքը դրած էր գնալ, տեսնել մեծ Յուսէփի պապի գերեզմանը և օրհնել տալ, տեսնել նաև իր թուրքացած աղքականները:

պիտի սերունդէն մէկը քահանայ չձեռնադրուեցաւ. Սև գետացի մի այլ սերունդէ մէկը քահանայ ձեռնադրուեցաւ Տ. Կարապետ անունով, այն նպատակաւ որ շարունակէ Սև գետ գնալ, կրօնական հաւատալիքները վառ պահել թուրքացած հայերու մէջ: Սա օրէնակ առած էր Կրօմցի թուրքացած յոյներէն, որք յունական պատերազմէն վերջը ինչիր տուին այլ և այլ դիսպաններու, վերադարձան իրենց նախնական եկեղեցւոյ գիրկը: Այս Տէր Կարապետ, որ Տաւաշիան կը կոչուէր, միշտ գիմած է Պօլոյ ամիբաներուն, ինդրած է մի հնար գտնել Սև գետացիներն ի քրիստոնէութեան վերադարձնել՝ հնարչէ գտած: Միայն հայ գիւղերու համար գոլրոցական ու եկեղեցական զրքեր միշտ առատ առատ նուէր առած բերած տարածած է հայ ժողովրդիան մէջ: Թող որ Սև գետացիք չկարողացան վերադարձնել. Ապիօն զիւղ բընակող Սևգետացիներէն շատեր կային որ Սևգետացոց տօմարին մէջ արձանադրուած էին, որոնցմէ սկսան զինուոր առնուլ: Կարապետ քանիցո գիմեց պատրիարքարան, արձանադրութենէ հանեց, սակայն զինուորական արձանադրութեամբ գարձեալ զինուոր կառնէին. 25 տարիէ ի վեր չեմ գիտեր թէ ինչ վիճակի մէջ է.

12.

Աբրիեօմ տէրայէն խնդրեց, որ Սևդետացոց անցեալն ու Յուսէփցոց անցեալը իրեն պատմէ. տէրան չպատմեց.—Պնա, քո տուն տես, ասաց. տան պակասութիւնները հոգա, Նահապետն ևս հետդ առ արի, որ խօսելիք ունիմ։

Աբրիեօմ գնաց, Նահապետին ևս խնդրեց որ իր հետ գայ. բայց նա չգնաց. դիտէր որ Աբրիեօմի հետ մարդ չէ կարող ապրիլ, նամանաւանդ եթէ գնար, Յուսէփցոց աչքէն կիյնար։

Աբրիեօմ երկրորդ անգամ խնդրեց, Նահապետ լսեց. բայց զարմացաւ թէ ինչու բնութիւնը փոխուած է. դիտէր որ նա երկու խօսք խօսիլ իր կեանքի մէջ չէր տեսած։

Աբրիեօմ այլ ևս բան չասաց. գնաց Տէր Կարապետի մօտ։

Տէրան տեսաւ Նահապետ եկած չէ. մի գիր գրեց, յայտնեց որ Աբրիեօմ խելօքացած, լաւ մարդ դարձած է. ձեզի ամօթ է որ ձեր ազգականի վրայ հոգ չտանիք։ Նահապետ այս նաշմակի վրայ իր ազգականներէն ևս մի երիտասարդ հետը կառնէ, կերթայ Կալաֆկայ տէրայի տունը, քանի որ կը հիւրասիրուի։

Տէրան դիտէր որ Նահապետ տեղեակ էր Յուսէփցոց պատմութեան. պարտը դրաւ նորա վրան որ Աբրիեօմին պատմէ։ Նահապետ պատմեց։

Աբրիեօմ ասաց.—Նահապետ, դու որ գիւտէիր, մինչև հիմայ ինչու չէիր ասեր։

— Բո տուն չաւիրի, դու Աստուծուն չէիր լսեր, քեզ նվ կարող էր մի բան ասեր, կատաղած՝ աշխարհ կաւերէիր. միթէ մեղաւո՞ր են Յուսէփցիք, որ քեզ սպաննելու հետ են. այն էնչ անմեղ արխններ դու թափեցիր. միայն մեծ Տէր Կարապետի հրաշքն ու նորա տան չնորհքն է որ հանդարտ նստած ես։

Աբրիեօմ իր և տէրայի մէջ մի նմանութիւն գտաւ. տէրան Սև գետի նահատակի սերունդէն էր, իսկ ինք Մալայի նահատակի սերունդէն, երկու սերունդէն բազմաթիւ անձինք Մահմետի կրօնին դարձած էին. տարբերութիւնը այն էր, որ Տէր Կարապետ մոռացած չէր Սևդետացիւներն, ապրին մի անգամ կայցելէր, կը քարսդէր, կրօնական պաշտամունք կը կատարէր. իսկ Մուսլի օղլինները մի հայի երես անգամ տեսած չէին։

Աբրիեօմ յանկարծ ոտի վրայ կանգնեցաւ, ասաց.—Շուտ արա, Նահապետ, ելիր, պատրաստուէ, պիտի երթանք։

— Հօրեղբայր, ուր, դարձեալ Խըլըռեցմը, ինչ կայ։

— Կերթամ մեր մեծ հաւի դերեղմանը տեսնելու. պիտի տեսնեմ Մուսլի օղլինները, խօսիմ։

Նահապետ երբ տեսաւ Աբրիեօմը բոլորու վին փոխուած՝ շատ ուրախացաւ և առանց տըրտունջի հետեւցաւ նմա։

Երիցին պաշար՝ դրաւ իրենց հետ, տէրան ևս կիսատ պահպանիչ մը ասաց ու ճանապարհ դրաւ, գնացին։

Աբրիեօմ՝ զինք ապահով զգաց, մանաւանդ անոր համար որ Նահապետ իրեն պաշտպան էր և ընկեր ու հաւատարիմ, ինքն ևս փոքր ինչ զգաստացած։ Նոքա ուղղուեցան յարեմուտս, Տրապիզոնի հարաւային լեռներէն պիտի անցնէին, որ վտանգ չպատահէր. բայց ուղիղ ճանապարհով երկիւղ կրեցին երթալ. արդէն ենիշէրիներն ու Յուսէփիցիները ցմիշտ հետքը գըտնելու հետամուտ էին։ Ասոնք անցան կիւշանայ գիւղն, ուստի իջան Ծինկիլայ. Շանայի վերին գլխով անցան Սարայներ, այսաեղէն անցան Մեծ Սամարութայ. բարձրացան Կրօմիլա, իջան Զեփանող, անցան Ալմալուի գիւղերն և իջան Տէյիրմէնտէրէի կոչուած գետն, որ կը բաժանէ Եօմուրա գաւառը Մաշկայէն. ապա բարձրացան Նոխածանայ ու Վերանայ՝ իջան Անիֆա, Արդալիա ևն, գիւղերէն անցան մի փոքր գետ ու բարձրացան Մալա։

Աբրիեօմ իր աւագակութեան միջոցին ամբողջ Եօմուրայի գիւղերը գիտէր. վերոյիշեալ հայ գիւղերու մէջէն անցած ժամանակ լաւ տը-

պաւորութիւն թողոց. հետաքրիր էր Մաշկայի հայ գիւղերն ևս տեսնել։

Աբրիեօմ ու Նահապետ մտան Մալա. գիւղացիները շատ լաւ հիւրասիրեցին, երբ իմացան փոքր Յուսէփի պապի թոռնորդին էր, ցոյց տուին Նահապետակ մեծ Յուսէփի պապի ու ամբողջ ընտանիքի կոտորուած վայրն ու գերեզմանները. Նահապետ ու Աբրիեօմ հառաջանքով համբուրեցին գերեզմանները։ Աբրիեօմի ընսւթիւնն էր. մի բան որ միտքը գրած լինիր, այն անմիջապէս պիտի կատարէր, ելան մեկնելու պատրաստուեցան։ Գիւղացիք յայտնեցին որ չգնան. — Չեր գնալը ապարդիւն կանցնի, գուցէ ձեզ ևս վնասեն. ափսոս էր, նոքա — Մուսլի օղիներն այժմ մոլեռանդ մահմետականներ են։

Նահապետ փոքր ինչ կաղաց, չէր ուղեր գընալ. — Ա՛յ, օղուլ (որդի), ասաց Աբրիեօմ. Հգիւմս որ միտքս գրածը պիտի կատարէմ։

Գնացին Փլաթանայի գիւղերը, գտան Մուսլի օղիները, յայտնեցին թէ մեծ Յուսէփի պապի ցեղէն են և հայ։

Մուսլի օղիներն ևս այդ կողմերու թուրքերու մէջ անուանի ու քաջ էին, Յուսէփիցիներէն աւելի վեհանձն, տեսան Աբրիեօմի աներ կիւղ ընսւթիւնը՝ յարգեցին, բայց չուղեցին հայութեան, որ է քրիստոնէութեանը ու է խօսք բանալ. վասն զի մոլեռանդ մահմետականներ

էին, այլ պարտք դրին Աբրիեօմի վրան, որ գոնէտարին մի անդամ՝ այցելէ:

Ասոնք դարձան յետ. Աբրիեօմ իմացաւ Յուսէփցոց անցքը, հետաքրքիր էր Սևդետացոց անցքին ևս կատարեալ ծանօթանալ. այս պատճառաւ պէտք էր գնալ Տէր Կարապետի մօտքայց ընտանեկան հանդամանքները ստիպեցին զինք միջոց մը մնալ Սամարտքսայ-Շանայ. Նա այժմ աւազակութիւն չէր աներ, միայն տան պիտոյքը հոգալու համար ստիպուած էր մէկէն, միւսէն մի բան ուզել, ինչ որ կամաւ կտային կը գոհանար: Նա միտքը դրած էր մի կերպով իր տղգականներու և հայ ու այլազգի ժողովը դեան հետ հաշտուիլ. բայց հնար չեղաւ, վասն զի Յուսէփցիքներովամտութիւն ինչ է՝ չգիտէին. բոլորովին մերժեցին, վճռեցին անհրաժեշտ ըստ պահնել:

Նահապետի միջնորդութիւնը ևս առաւել գոդուց Յուսէփցոց, մինչև իսկ Նահապետի դէմ լարուեցան:

Աբրիեօմ, Նահապետ և ուրիշ 2—3 ընկեր ևս երբեմն հետներն առած՝ ոկտան դարձեալ աւազակութեամբ պարապիլ, որպէս զի երկիւզով ազգեն Յուսէփցոց վրայ և մեղմացնեն:

Յուսէփցիները լաւ գիտէին, որ Աբրիեօմ արիւնարբու էր, շատ մարդ կարող էր սպահնել, նամանաւանդ այժմ Նահապետի առաջնորդութեամբ զգոյշ կը դուծէ, գիւրաւ չսպահնուիր.

սակայն իրենց ցեղին յատուկ եղած յամառութեամբ ամեն գալիք վտանգ ուրքի տակ առին:

Շաթր օղին ևս տեսնելով նորա անօրինակ քաջութիւնը՝ կը մտածէ թերեւս մի օր իշխանութեան անդամ՝ վտանգ սպանայ. այս պատճառաւ ամեն կողմ իր հաւատարիմ մարդոց լուր յղեց, կամ սպահնեն և կամ խափելով իր մօտ բերեն: Սակայն գիւրին չէր սպահնել. արդէն ամենը կը հաւատային թէ նա կախարդուածէ, սատանաները նորա կը պահպանեն, նորա աչքերը գիշեր ցերեկ մի հաւասար կը տեսնեն. սար ու ձոր, քար ու ժայռ նորա համար հարթանապարհ է. նա թռչնոյ նման կը թռչէր, եղանիկի նման արագավազ էր, գնդակ ու սուր նորա չէր բռներ. ևն. ևն. այլ ևս Յուսէփցիներէն դուրս մարդ չէր կարող նորա սպահնել:

12.

Ա. Յ. Զ Մ Ա. Յ

Տրապիզոնէ Յամ յարեելս, նոյնչափ և Սիւրմէնէ յարեմուտս, այս երկուքին մէջ ծովավինեայ մի փոքր դաշտավայր կայ Պովաթայ անունով, որ 2—3 Ժամ տարածուած է ծովունետ, 1<sub>2</sub>—5<sub>4</sub> Ժամ լայնութեամբ:

Պովաթայէն 2—2<sub>1</sub><sub>2</sub> Ժամ ի հարաւ մէծ և Փոքր Սամուրաքսայ գիւղերէն իջնող ձորակնեւ

բու միացման կէտի վրայ կայ մի յունական ուխտավայր Այազմայ անունով։

Երկու ջրերու միջավայրն կայ ջրաղաց մի և աջ կողմ երկու կալի տարածութեամբ տափարակ վայր մը մէջտեղը մի յաղթ ընկուղենի երկար դարերէ մնացած։ Այս տափարակէն 150—200 քայլ վերև—փոքր Սամարաքոյէն իջնող ջրի կից աջ եղրին վրայ բաղկի հաստութեամբ կը բղիսի մի հանքային ջուր, որ շատ թունդ է, անցած վայրը կարմիր ժանդի խաւ կամ հետք կը թողու յատակը գտնուած կարծր քարերու վրայ, մինչև անդամ ձորի մէջ մոնելէն յետոյ ես։ Այս հանքային ջուրը Համբարձման օրը ուխտավայր է։ Հայ, յոյն և թուրք ազգաբնակութեան ամեն դասակարգի մարդիկ այդ ջրով պիտի լուացեն, խմեն<sup>1)</sup>։

Այս ձորի չորս կողմն անտառային մանր ծառերով պատած է. աջ ու ձախ կողերն թէք

1) Միայն Համբարձման օրը խմել սովորութիւն էր. բայց 1867 թուին տեսայ այս ջրի կազային համը. քանի չիշ լեցուցի, քաղաք տարի, բժշկի մը ցոյց տուի. մինչև քաղաք տանելը իր թունդութիւնը կորուսած էր. ըստ բժշկի պատուէրին նոր շիշեր տարի լաւ խցաններով ամրապինդ խցեցի, բերանն ևս հալած ձիւթով պատեցի, որով շիշերու մեծ մասը պայթեցաւ. Այդ օրէն այդ ջուրը կարևորութիւն ստացաւ. ամեն կողմէ—քաղաքէն, Պօլսէն, այժմ ևս Եւրոպայէն կդան. մեծ քանակութեամբ կը տանեն ամեն օր։

զառիվերեր են, մացառուտներով, փուշերով ու բուլքերով պատուած։

Այսօր կենդանութիւն ստացած է ձորակս, քանի ձեռք դափուլ զուռնայ կածէին. Հայ, յոյն, թուրք ձեռք ձեռքի տուած կլոր պար կը խաղային ընկուղենւոյ յաղթանդամ ճիւղերու ստուերի տակ. պարէն յետոյ ըմբշամարտութիւն, այսպէս երբեմն պար, երբեմն ըմբշամարտութիւն. Հասարակութեան մի մասն խոնուած կը լինէր պարի կամ ըմբիչներու շուրջը, մնացածներն ևս խումբ խումբ բաժանուած զառիվերերու ստուերներու տակ կեր ու խումբ կանեն ու մի կողմէն ևս հանգիստավայրը կը դիտեն, ոմանք ևս շարունակ կը յաճախեն Այազման ջուր խմելու կամ լուացուելու։

Այս ջրէն մին կը խմէ, մին երեսն ու ճակատը կը քսէ, շատեր ևս առանձին վայրեր ջուր կը տանեն, մերկանան ու կը լողանան, ով գիտէ. ամեն մէկը իր ցաւն ու ուխտը ունի, ուխտադրութեան համեմատ կը շարժի. ոմանք ևս ջրի հանդէպն գտնուած կաղնուտի մէջ զետեղուած բուլքերու տակ զուարձութեամբ կը պարապին։

Շաթր օղին ևս իր կանանցով ներկայ էր. նա 1—2 ժամ Այազմայի այս ջուրն առանձնացուց, շրջապատողները հեռացուց, ջուրն իր ընտանիքին յատկացուց, ջրի վրայ վրան զարկեց. վրանի մէջ մեծ ու փոքր լուացուեցան մտնելով փոքրիկ աւաղանի բղիսած վայրը։

Յաթր օղին ընկուզենւոյ ծառի տակ կերա  
թենկէր, պարողներուն ու ըմբշամարտիկներուն  
կը քաջալերէր. աֆէրիմ-աֆէրիմ կը կրկնէր:

Ըմբիշներն անփորձ էին, դիտմամբ կը մեռամարտէին, որպէս զի բուն ըմբիշները դրգըւ  
ուուին, հրապարակ գան: Այդպէս ալ եղաւ:

Որոշեալ ըմբիշները կէս մէջքի վեր մերա  
կացան, 5—6 կանգուն հեռաւորութեան վրայ,  
բոլորչի սկսան ման դալ, առանց իրար նայելու.  
Երբեմն ոստումներ անելով, ծափ տալով և ապա  
ազդյներուն ու կրծքերուն այնպիսի ուժգին  
ծափի հարուած կտային, որ շիրտոցը ձորը կը  
թնդացնէր, որպէս զի կազդուրուին, ուժեղաւ  
նան. քանի շրջան յետոյ աւելի ուժգին ծափեր  
և հարուածներ, աւելի արագ ոստումներ կա  
տարեցին. այս անգամ աչքերնին իրարու յառ  
ուած որպէս մէկուն արած շարժումը մի ակնաւ  
թարթի մէջ միւսն ևս անէ կամ հակառակորդն  
յանկարծակիի բերէ, վտանգաւոր տեղէ մը բռնէ,  
գետին տապալէ: Սորա յանկարծ խոյացան իրար  
վրայ. կեռած իրարու բազուկները բռնեցին,  
գլուխնին մին միւսին ձախ ուսին վրայ սեղմեց  
ուժգին. միջոց մի իրար տարին բերին, առա  
յանկարծ արձակուեցան, ծափ տալով նախկին  
ձեռվ սկսան շրջան կատարել:

Տեսարանը փառաւոր էր, բազմութիւնը խըռա  
նուած էր իրար վրայ ու գրգռուած, վասն զի  
ըմբիշներու մին թուրք էր կարսլի-օղի անունով,

միւսը Յուսէփիցի Փիլոսն. Յուսէփիցի կողէին  
Փիլոսը յաղթէ, թուրքեր ու յոյներ կողէին  
Կարսլի-օղին յաղթէ. երկու կողմէն իրենց ըմ  
բիշներուն կը սավորեցնէին այս կամ այն ձեւը  
անէ որ յաղթէ, բայց ըմբիշներն առանց քաշ  
ջալերութիւն լուելու. բուռն կերպով իրար բռնած  
յարմար տեղէ մը բռնելու միայն ուշադիր էին:  
Սոքա մի անգամ ևս արձակուեցան. շրջաններ  
կատարեցին. յարձակուեցան իրարու վրայ, մին  
միւսին 20—30 քայլ քշեց յետ. ապա միւս իր  
ուժը հաւաքելով հակառակորդին քշեց: Մին յան  
կարծ ձախ ձեռքը ձգեց միւսի աջ ուսին, իսկ  
աջով բռան մէջ ամփոփեց կրծոսկրներու ներքին  
մասը, միւսն ևս ձախ ձեռքը արգէն ձգած էր  
հակառակորդի ուսին. աջով փորը: Երբեմն ևս  
արագաշարժութեամբ մին թոյլ կտար, մի ձեռքը  
գէպի վեր կը շարժէր. որպէսզի ըմբիշը վերէ  
մասին ուշադրութիւն դարձնէ. բայց յանկարծ  
նորա չյուսացած տեղէն կը բռնէր. ուժգին կը  
ձգէր որ տապալէ: Նոյնպէս միւսը աջ ձեռքը կը  
շարժէր ձախէն բռնելու համար կամ ոտին կը  
ձգէր վիզը բռնելու համար, այսպէս շարունակ:

Ըմբիշները քրտնած կաս կարմիր կտրած  
կը հեռային:

Հանդիսականներէն ոմանք երբեմն շունչ  
քաշելու համար այս այն կողմ կը դառնային.  
մի քանին տեսան իրենց հանդէպը գտնուած  
զառիվերի վիճակիանկայ ու մարու վշոյ բուլ-

քերու ետև քանի մարդոց գլուխներ, որը բարձրէն ըմբիշներուն կը դիտէին, հետաքրքիր անգամ չեղան թէ ինչու մօտ պիտի չդային. վասրն զի ամենուն ուշը ու միտքը երկու գոտեա մարտիկներու վրայ էր:

Երկու ըմբիշներ ևս մին միւսից ուժով. եթէ մէկու բազկի մէջ ուժ կար, միւսի սրունքներու կամ վզի մէջ. շունչ քաշելու համար յանկարծ գարձեալ արձակուեցան, շրջան կազմեցին, իրարու ուժը արդէն փորձած էին, կը մտածէին իրարու թոյլ անդամներ որ մէկը լինելը, որ այն տեղէն բռնեն: Այս անդամ վերջնականապէս յարձակուեցան, նախ բուռն ուժով գրկուեցան, մին միւսին սալմայ (մի ոտով հակառակորդի ոըրունքին զարնել) զարկեց իրանը հակառակ կողմէ հրեց որ տապալէ. սակայն նա չթնդաց իր տեղէն, իսկ հակառակորդն ևս յանկարծ գետին ընկաւ, որ միւսը սորա կոնակի վրայ ընկնի, ետև, տապալուի:

Ըմբիշները 1<sup>1</sup> | 2 կամ 2 ժամ հաւասար ուժով գոտեմարտեցան, բայց վերջի վերջոյ կարսլի օղու կուսակիցք զգացին Փիլոս պիտի յաղթէ. սկսան բրերով հարուած տալ որ բաժանուի:

Յուսէփցոց մեծ և փոքր կանայք անդամ գրդուեցան:

Յանկարծ մազուլի փշերու ետևէն հրացանի ձայնի հետ մի գնդակ գետին տապալեց Փիլոսին հարուած տուող մի թուրքի: Հրացանի

թանձր ծուլսի մէջէն մի խրոխտ ձայն սարսափեցուց բոլոր հանդիսականները, հանդիսականները մոռացան սպանուածը ու ըմբիշները վասն զի Աբրիեօմի ահոելի ձայնն լսեցին. սկսան խոյս տալ յանկարծակիի եկած. մէկ մասն որ իրենց ուշագրութիւնը լարուած էր ըմբիշներու վրայ ամենին ուշագրութիւն անդամ չդարձուցին. ըմբիշներն ևս մահուան ճգնաժամի մէջ եղողի մը պէս, իր ուշը հակառակորդի վրայ էր:

Թուրքը նեղ վիճակի մէջ էր, կուզէր բաժանուիլ, սակայն կամակար Փիլոս մատները ցըցած էր թուրքի մսի մէջ և պինդ բռնած: Մի թուրք ատրճանակը հանեց որ գնդակահար անէ Փիլոսին, բայց բուլքի ետևէն մի գնդակ ևս գետին դլորեց վերջնոյս, ձայն մը «իսօնձողոտը կէնէ թփուեցաւ» լսուեցաւ<sup>1)</sup>:

Աբրիեօմ ձայնի հետ բուլքի ետէն թուացած. կարծես մի ժայռ արագ-արագ գլուխեց ու դէպի ցած կգար, ետևէն ընկերները:

1) Առակ է սա. իբր մի մարդ 999 մարդ կսպաննէ, յետոյ կը զգայ. գերեզմանատանը ապաշխարանք քաշէ. քահանայն խօնձողոտ մը կը տնկէ, կտսէ՝ ելք այս այրած խօնձողոտը կանանչացաւ, ապաշխարանքդ վերջացած է: Ապաշխարողը մի գիշել կը տեսնէ մէկը եկած ննջեցեալ մի հարս գերեզմանէն հանեց, չնութիւն պիտի նագործէ, կատէ.—Հազարէն մէկ ողակաս էր, թող լինի հագործէ, կատէ. Առաջանայ մէկ ողակաս էր, թող լինի հազար. կապաննէ, Առաջոտեան կերթայ, կը տեսնէ՝ որ խօնձողոտը կանանչած է:

Հանդիսականներու մեծ մասը խոյս տուածէին, մհացողները ևս սարսափահար ձոր ի վեր, ձոր ի վայր փախան։ Շաթր օղլին ևս նստաւ իր ձին, գեպի ցած սրբնթաց քշեց. Աբրիեօմի առաջեցն ուր կարող էր պրծնիլ ամենէն սրբնթաց ձին, առաջը կտրեց, սանձը բռնեց, ասաց. — Կինդու երեխաներդ ում ես թողած՝ խոյս կտաս, այ կնամարդի, չես ամաչեր, չէ դու բէղ ես։  
— Աբրիեօմ, որդի, դու ես, ես կարծեցի ուրիշ մարդ է։

Ենւո, գարձիր, գնա խանումի մօտ, ասա որ երկիւղ չկրէ. ես տարդի չեմ. ձեր տան պատիւը կը պահեմ, միայն յանցաւորը կը պատժեմ։

— Այ որդի, ասաց Շաթր օղլին, դու Փիւրսի համար ինչու այդչափ արիւն թափեցիր. նա քանի քանի անդամ քեզ մատնեց։

— Գիտեմ, ասաց Աբրիեօմ. այդ իմ ու Փիւրսի հաշիւն է։

Շաթր օղլին առաւ ընտանիքը, քաշուեցաւ. Աբրիեօմ բարձրացաւ ընկուզենւոյ տակ, տեսաւ, ըմբիշներն դեռ քրտնախառն կը գօտէմարտէին. ընկածներու մէկն ևս հոգեվարք էր։

— Այ Յուսէֆցիի կաթը քեզ հարամ լինի, դեռ չես յաղթած, դոչեց խրոխտ ձայնով Աբրիեօմ։

Փիւրս ուժը ամփոփեց, ամենայն ուժգնութեամբ գետին ու գալեց թուրքին, ոչքարը

արքեց, տեսաւ մարդ-մուրդ չկայ, միայն երկու գիւակ ու Աբրիեօմ Աբրիեօմ Փիւրսին ասաց. — Ապրիս։ Դարձաւ կրկին ասաց. — Հայդէ, գնա, հեռացիր, աչքէս հեռու կաց, խելքդ գլուխդ հաւաքէ, ես Աբրիեօմն եմ, հա, ձեռքէս չես ազատիր։

Շաթր օղլու ետեկն կանչեց Աբրիեօմ. — Բէղ, արածո շատ մի տեսներ, ես Աբրիեօմն եմ, մի օր պէտք կգամ քեզ։

Շաթր օղլին կը մտածէր թէ ապագային իրեն պէտք կգայ Աբրիեօմ. սակայն իր ներկայութեանը Աբրիեօմի արածն անտանելի է. որով ամեն միջոց ձեռք առաւ, սրեց թշնամիները։

Թուրքերն առաջ այնչափ լարուած չէին Աբրիեօմի հետ, որչափ այս խնդրայն մէջ. այժմ ամենայն ուժով միացան Յուսէֆցոց ու ենիշէրիներու հետ և սղաննելու ամեն միջոց ձեռք առին։

Յոյներ թէև բազմաթիւ, բայց երկշոտ հասարակութիւն կը կազմէին, մինչև այժմ ամեն անարդանը անտրտունչ կը տանէին. այժմ տեսուան թուրքերու սաստիկ գրդուումը միացան թուրքերու հետ. քաջ մարդիկներ որոշեցին որ հետեւն Աբրիեօմին Աբրիեօմ զգաց. Կակոս ու Աւետիս անունով երկու ընկեր ևս ճարեց, եղան վեց հոգի, սկսան աներկիւդ ման գալ կողուպուտիր։

Յայներ Աբրիեօմի կազմած քաջ խումբը լրբ

լսեցին, զզջացին, բայց մի անդամ միացած՝ ի Տրապիզոն Ենիչէրիներու աղասիին գանդատած էին, այլ ևս օգուտ չէր աներ:

Ենիչէրի աղասին 30 հատ Ենիչէրի կը յդէ, որ Աբրիեօմը առանց սպաննելու կալանաւորեն, որպէս զի անձամբ տեսնէ թէ Աբրիեօմ ինչ տեսակ մարդ է: Շաթր օղլին այս անդամ չգիտեմ ինչ պատճառաւ՝ Աբրիեօմին լուր կը յդէ, որ խոյս տայ, զինքը բռնելու են, թերես ապագային ինքը կալանաւորէ, պատիւ ստանայ:

Աբրիեօմ այն պտուղը չէր, գիւրաւ ձեռք ընկնէր առանց սպաննուելու. խոյս տուեց անտառներու խորը, ուր բիւրաւոր մարդիկ չէին կարող նորա հետքը գտնել:

Որպէս գիտենք, Աբրիեօմի տունը քանդողը իր որկրամոլութիւնն էր, նաև գինեմոլութիւնը, ինքնահաւաննութիւնն ու հպարտութիւնը. նա սովորած էր գնալ այն տունը, ուր նոր փուռք վառած թաժա հաց թխած էին, կը սիրէր տանը միջավայրը՝ բուրակի մէջ փռէն քաշուած ու կուկուլած կրակի շուրջը բաղմիլ, տաներն ու սրունքները բանալով կրակին տալ և մազոտ բաց կուրծքը տաքայնել, ձուածեղ ուտել, տաք-տաք փուռնիտը (մեծ գունդ հաց—սօմի) մածնի մէջ փշրել, ուտել, վրան ևս մի քարզան գինի խըմել, զինքը դժողո՞ն ընդունողներն ևս երբեմն դանել:

Կը պատմեն թէ մի գիշեր Աբրիեօմ իր ըն-

կերներով եանպօլի կերթար խոզի որսի, ճանապարհին կը պատահի մի խումբ հայերու, որք իրենց սովորութեան համեմատ չեկլի<sup>1)</sup> վառած, հարս, կին և տղամարդ մի մի բեռ ածուխ շաշլակած կը տանէին քաղաք որ վաճառեն, լազուտ գնեն, բերեն հաց թխեն, ուտեն:

Սոքա Աֆիեանծցի և կիւշանացի հայեր էին:

Աբրիեօմ առանց վրայ կը բարկանայ, բեռները թափել կտայ, մի մարդ պահապան կը դնէ, միւսներուն կստիպէ իրենց կանայախլիները (իգական) շալակեն, տուն տանեն, ապա գան, գործելին քաղաք տանեն վաճառելու:

Աբրիեօմ գնաց Եամբօլի խոզ որսաց ու վերադարձաւ:

Մի օր նա Ակոբ թէ Պօղոս օղլու տուն նըստած կուտէր ու կը խմէր, յանկարծ մօտակայ տեղէն հրացանի ձայն ականջին առաւ, հետը ևս երկու ատրճանակի ձայն. մէկէն թուաւ վեր ու գոռալով գուրս վազեց ասելով.—Վայ իմ արևուն, Նահապետ զարնուեցաւ նա զգաց որ հրացանի գնդակը դատարկ անցած չէ. նորա լսողութիւնը այնքան զարդացած էր, նպատակին առած գնդակը ու դատարկ անցածը հրացանի ձայն կը հասկանար, կասեն շատեր:

Այս, Նահապետ զարնուած էր. այդտեղ

1) Կաղնի վայտի մի կողմը կը չախջախեն, ծխի մէջ կը չորացնեն, շատ երկար միջոց կը վառի:

բարձր վայրենի ծառեր կային, որ խաղողի որմեր վրան բարձրացած առաստ խաղող տուած էին. Նահապետ հրացանը դրաւ ցած, բարձրացաւ ծառի վրան, խաղող կուտէր. եօթ ենիշէրի որ կը լրտեսէին՝ գաղտնի եկան ծառի տակ. Նահապետի հրացանը մին առաւ, դնդակահար առաւ Նահապետին. Նահապետ ևս վերևէն ատըրծանակի երկու հարուածով գետին գլորեց մի ենիշէրի, բայց ինքն ալ ուշաթափ լինելով բարձր ծառէն ընկաւ. Այս միջոցին հայթաներն երբ Աբրիեօմի ահուելի ձայնը լսեցին, խոյս տուին. Աբրիեօմ մէկը նշմարեց. իր հրացանը արձակածին պէս գետին գլորեց. Ապա վազեց Նահապետի մօտ, վերքերը լզեց, կապեց և հետզհետէ եկան ընկերները. տեսան Նահապետը վըտանգաւոր գրութեան մէջ. Նա դնդակէ այնչափ վնասուած չէր, որչափ ծառէն իյնալէն.

Աբրիեօմի բազուկը կոտրեցաւ, որովհետեւ Նահապետի յոյսով, քաջութիւնով և անունով ազդած էր հասարակութեան վրայ. այժմ՝ զգաց որ ենիշէրիներ հասարակութենէ բազմաթիւ ոգնականներ առնելով զինքը պիտի պաշարեն. Նահապետն ևս գեռ կենդանի էր, չէր կարող թողուլ ու խոյս տալ. այլ անմիջապէս փայտի ձողերէ մի սալ շինեցին, վրան զետեղեցին, երկու հոգի շալակեցին, ուզզուեցան կալաֆկայի կողմ, սակայն տանելուն շատ նեղութիւն կրեցին. պիտի անցնէին խոր-խոր ձորերէն, բարձր կիրճա-

րէն. Յուսէփցոց մէջ տարածուեցաւ Նահապետի սպաննուելու լուրն. առ հասարակ հայ, յոյն, թուրք, որոց առաջ անցած Փիլոս և Պողոս պընողեցին Աբրիեօմի ետևէն. Աբրիեօմ քանի անգամ յետ դարձաւ 1—2 վերստի չափ վայր, 2—3 մարդ սպաննեց, արագ վազելով հասաւ ընկերներուն. Փիլոս խորամանկ էր. մտածեց որ կտրուկ ճանապարհով չեն կարող տանել Նահապետը, պտոյտ պիտի տան ըլուրի մը ետևէն. ինքը իրեններով կտրուկ ճանապարհով բարձրացաւ, Աբրիեօմի գնալիք ճանապարհի անցքը փակեց:

Նահապետ ասաց.—Ես կը մեռնեմ, զիս մի տանջէք. այժմ անոնք մեր առաջի անցքը ըլունած են, զիս իջեցուցէք անտառի խորը, ձեր գլխու համար ուրիշ ճար մտածեցէք:

Աբրիեօմ փոքր ինչ պահուեցաւ. երբ սկսաւ մութը կոխել՝ կակոսը յղեց զինեալներու առաջ. նա ըլուրի հակառակ կողմ խոյս տալով «Վայ, մեռայ, վայ, մեռայ», գոռաց. զինեալներն ձայնի կողմն հաւաքուեցան անտառի մէջ. իրենց ետևի գագաթը մնաց դատարկ. հարիւրէ աւելի հրացաններու բերաններ ուզզուած էին այն ճանապարհին, որ Աբրիեօմ պիտի գար, որ մի հարուածով վերջ տան նորա խմբին:

Այս միջոցին իրենց ետևէն լսուեցաւ երեք հրացանի պայթիւն, վեց ատրճանակի ճայթիւն. որ և ամեն բերնէ կը լսուէր «Վայ վուրուղում»

(աւանդ զարնուեցայ): Ի՞նչ պատահեցաւ: Աբրիւեօմի խոռմբ քիշւոր էին, չէին կարող դէմ առ դէմ կռուիլ. Կակոսի ձայնով անոնց ուշը յետե գրաւեց, իսկ ինքը բարձրացաւ ետևի գագաթը, մի անդամէն կրակեցին ամբողջ խմբին վրայ: Հրացաններու ու ատրճանակներու մէջ մանր սէմա լցուած էր դիտմամբ. սէման գրեթէ ամեն մարդու դպաւ. որու որ դպաւ՝ փոքր ինչ արիւն հոսեցաւ. նա կարծեց թէ գնդակէ զարանուածէ, այն ևս Աբրիւեօմի անվրէպ գնդակէն ու ընկաւ գետին շուարած: Այսպէս շատեր մոլորեցան թէ ինչ պիտի անեն:

Աբրիւեօմ զարազուլախը քաշեց, տասնէն աւելի մարդ սպաննեց, ընկերներն ևս քանի հոգի գնդակահար արին. մնացողները «Վայ վուրուլդում» ասելով փախան: Իսկ Աբրիւեօմ՝ դարձաւ նահապետի մօտ, տեսաւ կը մեռնի. աւետիս տուեց թէ Փիլոսի ընկեր Պօղոս սպանուած է:

Նահապետ փոքր ինչ ժպտաց ու մեռաւ:

Աբրիւեօմ նահապետը տարաւ Տէր Կարապետի գիւղը, թաղել տուեց: Նա յուսահատ դըրութեան մէջ ընկաւ, սկսաւ առանձին կեանք սիրել. ընկերները ճանապարհ դրաւ: Նորա վըրան մի տեսակ ցնորք եկաւ. երբեմն զարազոււախը կը քաշէր, այս ու այն կողմ հարուածներ կտար, փայտի, քարի, անասունի ևն: Նոյնը կանէր քնոյ մէջ. յանկարծ անկողնէ վեր կը ցաթկէր, զարազուլախը կը մերկացնէր, տան

շուրջը շրջան կը կտարէր, սիւներու ու գերաններու այնպէս ուժգին հարուած կտար՝ զարազուլախը մի թիզ կը թափանցէր: Առաւօտեան երբ նա կը տեսնէր գանակի բերանը կոտրած կամ գուլացած՝ կը զարմանար, ինքն իրեն կասէր. «մենէ աղէկներն արած են»:

### 13.

Այս վիճակի մէջ Աբրիւեօմ գնաց տէրայի տունը. տէրան նորա վրան պահպանիչ սասց նա չկարողացաւ մնալ, դարձաւ գնաց տունը, մի դիշեր մնաց ընտանիքի մօտ, առաւօտ շուտ վեր կացաւ, գնաց Փիլոսի եղած գիւղը: Տեսաւ ձորի հանդէպն Փիլոս լուծք կը վարէր. իր 6—7 տարեկան Յակոբ որդին ևս մօտը. տեսնելուն՝ կորիւնը կորմնցուցած առիւծի պէս գոռաց.— Փիլոս, քեզ պատրաստ պահէ, սպաննուելու ժամդ հասած է. Աստուած կամ քեզ կտայ, կամ ինձ, յետոյ չասեն Յուսէփցիք թէ Աբրիւեօմ տմարդութիւն արաւ, առանց իմաց տալու սպաննեց: Աբրիւեօմի գոռոցը ձորը թնդացուց. Փիլոս թոյլ տուեց լուծքը, հրացանը առաւ ու փախաւ: Աբրիւեօմ նորա ետևէն պնդեց ու պոռաց.— Վայ քեզ, տմարդի պոռնկորդի, դու Յուսէփցի չես, քո որդին ինչո՞ւ կը ձգես, փախուատ սէփցի չես, քո որդին ինչո՞ւ կը ձգես, փախուատ կտաս. կաց, Յուսէփցոց պիղծ արիւնը մաքրեմ.

չէ հրացան ունիս, քո քաջութիւնը մատնութեան  
մէջ է միայն. քիչ սպասէ, գլուխդ ենիշէրինեւ  
րու ռաքի տակ դնեմ:

Այս անարգանքը Փիլոսի արժանապատւուց  
թեան դպաւ, թէև գիտէր Աբրիեօմ անդութէ,  
սակայն իր հրացանաձգութեան վստահ չէր, ինչ  
պէս Աբրիեօմ, այլ դարձաւ փոքրիկ Յակոբի  
մօտ, յուսալով որ կը խնայէ, նա մանաւանդ ա-  
ւելի լաւ համարեց որդու մօտ մեռնիլ. Աբրի-  
եօմ քաւական մօտեցած էր, ձայն ձգեց.—Փի-  
լոս, միտք բեր Այազման, Նահապետը:

Ես ի՞նչ մեղք ունիմ, Աբրիեօմ, ձայն տուեց  
Փիլոս:

Դու այն մեղքը ունես, որ երկրի վրայ  
շատ ապրեցար, քեզ զրկեմ Նահապետի մօտ,  
որ Նահապետ դառնայ այստեղ:

Յակոբ փաթաթուած էր Փիլոսին. Աբրիեօմ  
առանց գնդակ արձակելու հասաւ, Փիլոսի փորը  
միեց դանակն ու աղիքները դուրս թափեց.  
Երկրորդ հարուածին նորա կեանքը վերջացած  
էր: Աբրիեօմ Յակոբը առաւ դիրկը, համբուրեց,  
ասաց.—Առ, հայրիկիդ հրացանը, դնա, քեզ  
արժան է, Փիլոսին սատկեցուցի, որ դու մա-  
քուր Յուսէփցի մնաս:

14.

Աբրիեօմի այս արածը աւելի զայրացուց  
հասարակութեան. դարձեալ սկսան հնարներ  
մտածել, մի կերպ ազատուիլ այդ հրէշէն: Աբ-  
րիեօմ ևս իմացաւ, փախաւ Գարա-Տէրէ Խալիլ  
բէղի մօտ. մնաց միջոց մը—մի տարի կամ քիչ  
մը աւել կամ պակաս. երբեմն գաղտնի գիշերը  
կերթար տուն, ընտանիք կը տեսնէր, կը վերա-  
դառնար:

Նուրար օղի Կարապետ անունով մի երի-  
տասարդ Եանայէն եկաւ Սև գետ Աբրիեօմի մօտ,  
ասաց.—Փիլոսի չափահաս Մարթա անունով աղ-  
ջկան դրացի թուրք մօլլա Խոմայիլ սիրահարած  
էր, բայց քո երկիւղէն չէր կարող փախցնել.  
իսկ այժմ լսած լինելով քո և Փիլոսի թշնա-  
յութիւնը և Փիլոսի սպաննութիւնը, փորձած է  
առեւանդել ու փախցնել բռնի: Մի օր Մարթան  
երբ գերանդիով կազնուտի մէջ խոտ կը հնձէր՝  
մօլլան կը յարձակուի Մարթայի վրայ, երկուսի  
մէջ կատաղի կոկւ կոկսի. Մարթան գերանդիով  
հարուածներ կտայ մօլլային, կը վիրաւորէ. մօլ-  
լան ճարահատեալ կը փախնի, տեսնելով որ աղ-  
ջկան մայրն ևս հրացանով օգնութեան կը հաս-  
նէր: Աբրիեօմ այս երբ լսեց՝ համբերութիւնը  
կտրեցաւ. առաւ կարապետը իր հետ, երկու  
աւուր մէջ հասաւ Փիլոսի գիշերը, ուղղակի գը-

նաց մօլլայի դուռն ու դուրս կանչեց մօլլային։  
Կէս գիշերին մօլլան սարսափեցաւ, երբ լսեց  
Աբրիեօմի խրոխտ ձայնը. բայց ինչ կարող էր  
անել. դուռը պիտի բանար։ Բացաւ։

Աբրիեօմ մօլլային ասաց. — Ալի՛, մի աեղ  
պիտի գնանք։

Մօլլան մի սպիտակ ներքնավարդիքով ու  
շապիկով ընկաւ Աբրիեօմի առաջ. միջոց մը դը-  
նալէն յետոյ ուղղուեցան դէպի Փիլոսի տունը։  
մօլլան գիտէր, որ Աբրիեօմէն բան հարցնել,  
գործի եղելութիւնը իմանալ չէր լինիր. այլ ինքն  
իրեն կը մտածէր, այս ընթացքին մէջ կամ մահ  
կայ, կամ բարիք. մի կողմէն կը մտածէր որ Փի-  
լոսի աղջիկն իր հետ պիտի պսակէ, վասն զի  
նորա տան հետ թշնամի է. միւս կողմէն ևս կը  
մտածէր՝ մինչեւ հիմայ ասկէ բարիք մը տեսնուած  
չէ, բացի աւարառութենէ և մարդասպանու-  
թենէ. հետեւաբար ինձ մահ կսպառնայ։

Աբրիեօմ այլ և այլ աներէ բերել տուած  
էր իր նախկին ընկերներէն չորս հոգի. ուղղակի  
գնացին, Փիլոսի դուռը բաղսեցին. Աբրիեօմ  
ձայն տուեց որ դուռը բանան։ Տանեցիներն ահ  
ու սարսափի մէջ ընկան, երբ լսեցին Աբրիեօմի  
խրզոտ ու դաժան ձայնը, ամեն մէկը մի ան-  
կիւն պլեցան. Մարթան մառանը փախաւ, իսկ  
Փիլոսի կինն առ ահի դուռը բացաւ երկիւղ կը-  
րելով հանդերձ թէ զիրենք ևս պիտի մորթէ։  
Աբրիեօմ ահոելի դէմքով մտաւ ներս. երբ

բուրակի մէջ տեսաւ փուռէն նոր քաշուած ու  
կուկուլուած կրակը, հանդիսաւ շունչ մը քաշեց.  
գնաց, նստաւ կրակի առաջ, մազոտ կուրծքը  
դէմ տուեց կրակին ու շփեց. «Օ՞խ» արաւ ու  
սկսաւ քերել. Փիլոսի կինը գնաց, ձեռքը համ-  
բուրեց. — «Ապրիս, խնդաս», ասաց Աբրիեօմ  
Փիլոսի կինը զգաց, որ Աբրիեօմէն այս անգամ  
վտանգ չկայ, վասն զի «ապրիս, խնդաս» ասած  
էր ըստ սովորութեան. բայց որչափ ևս վտանգ  
չինէր՝ նորա ներկայութիւնը ամեն ուրեք վը-  
տանգաւոր համարուած էր։ Աբրիեօմ կանչեց  
Մարթային. Մարթան դողդողալով եկաւ երբ  
տեսաւ մօլլան՝ այլագունեցաւ. — Երկիւղ մի կը-  
րեր, բան չկայ, ասաց Աբրիեօմ։ Մարթան Աբ-  
րիեօմի ձեռքը համբուրեց. Աբրիեօմ նորա ևս  
«ապրիս, խնդաս» ասաց. ապա հարցուց. — Մար-  
թա, Յուսէփցիի կաթը քեզ հալալ լինի, մօտ  
արի, առանց երկիւղի արդարն ասա. ինչ անցք  
անցած է այս մօլլային ու քու մէջ։ Մարթան  
ամաչեց, բայց երկիւղէն ամեն ինչ պատմեց։  
Աբրիեօմ մօլլային հրամայեց, որ կրակի մօտ  
ծալապատիկ նստի. Նա նստաւ. Աբրիեօմ զա-  
րացուլախը մերկացուց, սպառնացաւ, որ մերկ  
ստները կրակի մէջ պարզէ։ Նա պարզեց, բայց  
ստները այրեցաւ, յետ քաշեց. յետ քաշելուն՝  
մի դանակի հարուած տուեց, ոտները արիւնա-  
թաթախ կրակի մէջ պարզեց, ապա յետ քա-  
շեց։ Աբրիեօմ այս անգամ մօլլայի բամբակէ

շինած զավուխ կոչուած գլխարկի մէջ կրակ լեց, մօլլայի գլուխը անցուց, մօլլան երկու կրակի ու սրի մէջ խելակորոյս գոռաց, բայց Աբրիեօմի ղարաղուլախի հարուածներու տակ պարտաւորուած էր կրակի մէջ պարզել ու ակամայ յետ քաշել: Մօլլան այժմ կիսահոգի է, մորթուած հաւի պէս կը թփրտայ:

Ալբիկեօմ կանչեց իր տղոց, ասաց.—Տարէք  
այս շունը իր տունը, այստեղ թող չսատկի,  
պղծուի Յուսէփիի տունը։ Մօլլային ևս ասաց。  
—Դու գնա, քո ցեղին կտակ արա, ասա՝ թէ  
Ալբիկեօմ Փիլոսին կսպաննէ, բայց իր ցեղի պա-  
տիւը իր գլխէն վեր կը բռնէ. եթէ չսասացիր  
կդամ ձեր օրօրոցի երեխան ևս կը մորթեմ։

Մոլլան շալակեցին, աարին. նա Աբրիեօմի ասածին պէս արաւ:

Աբրիեօմ Մարթան կանչեց, նորա ճակատը  
համբուրեց, ասաց.—Մարթա, քեզ անուշ լինի  
Յուսէփցոց կաթը, քո ծծած ծիծը օրհնուի.  
դու վստահ կաց, երկիւղ մի կրեր քանի ես  
կեանք ունի՞մ այլ ևս այս տան պատւոյն արատ  
բերող չլինիր. այնպէս համարեցէք թէ Փիլոս  
Կրբէք ծնած չէ, նա մեռնելու մարդ էր՝ մեռաւ

Այսինքն՝ կանգնեցաւ, դնաց Յակոբի երես-  
ները քնած տեղը համբուրեց. — «Մնաք բարեաւ»  
ասաց ու մեկնեցաւ:

Նոյն օրը Աբրիեոմ տէրային հիւր եղաւ,  
այնտեղէն գնաց Սիւրմենէ Խալիլ բէղի մօտ.

գեց ամիս թէ Խալիլի և թէ նորա եղբօր մօտ  
մնաց. նոքա շատ լաւ պահեցին. Տարին որ ան-  
ցաւ, նա դարձաւ իր տուն. դիշերները տուն-  
կդար, իսկ ցերեկներն ըմբակայ անտառներու-  
մէջ կը բնակէր:

15.

Յաթը օղլին լոեց որ Աբրիեօմ Սիւրմենէէն  
Եօմուրա գաւառը անցած է, լուր զրկեց նորա  
որ իր մօտ գայ, վասն զի պատերազմ հրատա-  
րակած է Խալլի դէմ. սկսած էր պատերազմող  
կտրիճներ հաւաքել: Աբրիեօմ Խալլին շատ բա-  
րիքներ տեսած էր, չյօժարեցաւ գնալու Մնաց  
ժամանակ մը Շաթը օղլին հաշտութիւն կայա-  
ցնելու լուր տարածեց հասարակութեան մէջ,  
այդ լուրը հասաւ Աբրիեօմին որ իրեն ևս հա-  
ճելի էր, ուրախացաւ:

Վերջնականապէս դեռ հաշտութիւն կայացուցած չէին. երկրորդ անգամ ևս լուր յղեց Աբրիեօմին թէ՝ «Խալիլի հետ հաշտութիւն կայացնելու համար քաջ մարդոց խորհրդին պէտք ունինք. ինչպէս ուրիշները կդան, դու ևս շտապէ գալ, թերևս, Աբրիեօմ, քու ներկայութեամբ աւելի պատուաւոր պայմաններ կապուի Խալիլի հետ, որնի որ քու բարեկամն է»:

Արքիեպիսկոպոս այս անդամ մեծ նշանակութիւն

տուեց իրեն. հպարտ, հպարտ զինուեցաւ, անվախ, արձակ ու համարձակ անցաւ գիւղերու միջով. որովհետեւ այժմ Շաթր օղլիի հաւասար կը ճանաչէր զինք. նա առանց իրեն ներկայութեան չէր կացող հաշտութիւն կայացնելու։ Նա գիտէր որ Շաթր օղլին սուտ չասեր. ինչո՞ւ որ մի անդամ ենիչէրիներ երբ զինք պիտի կալանաւորէին. այս Շաթր օղլին էր զինքը զդուշացնողը և աղատողը. թէեւ գիտեր Այազմայի գէպքը, սակայն այդ ևս կը յիշէր «մի օր պէտք կդամ» ասածը։

Աբրիեօմ ուղղուեցաւ պալատը, երբ գըռնէն ներս մտաւ՝ աջ կողմի վրայ տեսաւ Շաթր օղլու արար ձիապանը. որ ձի մը կը թիմարէր. ասաց. — Արար, այդ ինչ է կանես։

— Աբրիեօմ, մինակ ձի թիմարել չէ, այլ շատքան գիտեմ, ասաց արարը։

Աբրիեօմ առանց արաբի խորհրդաւոր խօսքերու վրայ ուշ գարձնելու, գնացքը շարունակեց. սանդուխներէն վեր բարձրացաւ, մտաւ գահինը, բարեւ տուեց Շաթր օղլուն, յետ յետ գնաց որ իր համար պատրաստուած աթոսի մը վրայ նստի. բայց շարժուն տախտակի մը ծայրը, որ ոտներու տակ ընկածին պէս ցած գնաց, ընկաւ աջ ու ձախ գամուած երկու տախտակներու մէջ։ Թագուսած մտած մարդիկ վրայ հասան որ բռնեն, կապեն. սակայն Աբրիեօմ յանկարծ երկու ատրճանակները կրակեց. որոց մէկուն

գնդակը շեղեցաւ, իսկ միւոը երկու մարդ սպանանեց. Աբրիեօմ ամբողջ մարմնով կախուած էր տախտակամածի մէջ, միայն գլուխն ու բաղուկները դուրս մնացած էին։

Մի հնար գտաւ, զարազուլախը քաշեց և թոյլ չտուեց, որ մարդ իրեն մօտենայ. իսկ թուրքեր երկար ձողերով սկսան գլխուն ու բազուկներուն հարուած տալ. Աբրիեօմի ճարը կտրած զարազուլախը ձգեց, հարուած տուողին սպաննեց։

Աբրիեօմը բռնեցին, ձեռները կապեցին, սկսեցին հարուած տալ. այնպէս որ արիւնը աղքիւրի պէս կը հօսէր ու աչքերու մէջ կը լեցուէր. նա այլ ևս չէր տեսնէր։

Կայծակի արագութեամբ սյս լուրը ամեն կողմ տացածուեցաւ. հայ, յոյն և թուրք ձի նստան, շտապեցին տեսնել այդ հրաշքը. շտեր ևս հետիստն շտապեցին հասնել հանդէսին, որ իրենց համար հաւատալի չէր թուեր։

Այդտեղ Խալիլի գէմ պատերազմի պատրուակաւ հաւաքուած 300 զինեալ առին Աբրիեօմը իրենց մէջ, ընկան ճանապարհ Տրապիզոն տանելու համար. Աբրիեօմ աներկիւղ կը գնար. զինելոց շրջապատող զինելոց տմարդութիւնը մի զիները շրջապատող զինելոց Շաթր օղլու կնամարա առ մի կը թուէր, նոյնպէս Շաթր օղլու կնամարա գութիւնը. — Դուք, կասէր, 300 հոգի էք, իսկ ես ձութիւնը. — Դուք, կասէր, իսկ ես անզէն. զիս արմի մարդ. գուք զինեալ, իսկ ես անզէն. զիս արձակեցէք, տեսնեմ ձեր քաջութիւնը ուր կը

մնայ, կիներն ևս ձեր արածը կանեն. ամօթ ձեզ  
և ձեր չուն Շաթր օղլուն:

— Շատ մի խօսիր, շուն կեավուր. Շաթր  
օղին մեզ կը հետեի, կուզես կտորներդ շան ու  
դայլի բաժին անենք, ասաց ձիաւորներէն մին.  
մի ուրիշն ևս խիստ յիշոցներ տուեց:

— Իէղը զիս կը ճանաչէ. տեսած է զիս և  
իմ արած գործերը պատերազմի մէջ, իսկ նա  
շան չափ ևս հաւատարմութիւն չունի:

— Հարուածեցէք կեավուրի գլուխն, գոռաց  
Շաթր օղին:

— Իէղ, գոռաց Աբրիեօմ, յիշէ Այազման.  
այն օրը քու հոգին իմ ձեռքն էր, քու քաջու-  
թիւնը ուր էր այն օրը. խափելով կնոջ մօտ մարդ  
բռնելը քաջութիւն չէ, այլ պիղծ կնամարդու-  
թիւն:

Աբրիեօմ իր խօսքերը գեռ չէր աւարտած  
փայտի ու բրի հարուածներ տուին գլուխն. փայ-  
տերն արիւնուայ եղան:

— Այդ արիւնոտ փայտերը տարէք, խանու-  
մին պէտք կդայ, ասաց:

Շաթր օղին սոյն վերջին խօսքը չկարողա-  
ցաւ տանիլ. հրաման արձակեց՝ 80 հրացան միա-  
նուագ արձակեցին Աբրիեօմի վրան: Աբրիեօմի  
իրանը մազի պէս ծակ ծակ եղաւ, բայց յան-  
կարծ չընկաւ, կասեն ականատեսներ, այլ իր  
հայհութիւնը աւելի խիստ կը շարունակէր  
մինչև գահիճ մի հասաւ, զինք գլխատեց:

Կարդ մի հայեր, որք Աբրիեօմի բռնուե-  
լուն ուրախացած էին, ամբոխին հետևեցան.  
այդ ականատեսներէն այժմ մնացողները կը պատ-  
մեն թէ Աբրիեօմի գլուխը իրանէն բաժանուելէ  
մինչև կէս ժամ այս-այն կողմ կը ցաթքէր, կա-  
կազելով կը հայհոյէր:

Աբրիեօմի գլուխը տարին Տրապիզոն, ցոյց  
տուին փաշային. փաշան հրամայեց ձգեն ար-  
տաքնոց:

Մարմինը արդէն հայեր տարած, առանց  
կարգ կատարելու, եկեղեցիէն հեռու, անտա-  
ռակի մը մէջ թաղած էին:

Աբրիեօմի քոյրն, որ այս տողերը գրողը  
տեսած է Զեֆանող գիւղի մէջ, եղբօր գլուխը  
արտաքնոցէն կը հանէ, կը բերէ Սարայներու եկե-  
ղեցու մօտ, որ թաղէ մարմնոյ մօտ, սակայն ցոյց  
չեն տար թաղուած վայրը. նա անճարացած մի  
ուրիշ տեղ կը թաղէ եկեղեցիէն հեռի:

Այսօր շատ մը ծերունիք ցոյց կտան իրարմէ  
հեռու—գլխու ու մարմնոյ հորուած վայրերը:

Շատ շատեր անէծք կը կարդան նորա յի-  
շատակին. իսկ այժմ կան Յուսէփցիք նորա 1—2  
բարեմատնութիւններով կը պարձենան, մանա-  
ւանդ նորա քաջութեան համար:

Ընթերցողն ևս իր գատողութիւնը կանէ:



ԾԱՏՈՒԹՅԱՆ ԱԿՈԲ

1860—65 թուականներուն Մալա գիւղը եղած է մի այլ աւազակ Ծատուր օղլի Ակոբ, որ Աբրիեօմի պէս աներկիւղ ու քաջ էր և մեծ անուն ու հոչակ տարածած էր ամբողջ նահանգին մէջ. սա Աբրիեօմի պէս անտեղի մարդ չէր սպաններ. ընդհանրապէս տաճկի բռնութեան գէմ լարուած էր. նա մանաւանդ լարուած էր տաճիկ աւազակներու գէմ։ Տաճիկ աւազակաց մի խումբ շարունակ կը նեղէին, կը կողոպտէին զՄալացիս։ Ակոբ զինեցաւ, այդ աւազակներու մի քանին սպաննեց, մնացածները փախան-կուրան. Ակոբի երկիւղէն իրենց գիւղերէն անդամ հեռացան։ Մի խօսքով նա պահապան հրեշտակ էր Մալայի։ Նորա օրով ոչ մի յափշտակութիւն, գողութիւն չեղաւ, կասեն։ Նորա սարսափը չափազանց էր։ Պատմեմ տեսածու։

Նոր կիւրակէին Ամենափրկչի վանըը հաւաքուած էին քաղաքէն, շրջակայ գիւղերէն հայ, յոյն, տաճիկ և օտարազգիք, մոտ 10,000 հոգի, 2—3 օր զուարձանալու և եկեղեցական հանգիստներ ներկայ գտնուելու համար։ Ամեն կողմ-

վրաններ պարզուած էր, բազմաթիւ առևտրականներ զբաղուած էին իրենց գործով։ Բազմութիւնը խմբերու բաժանուած՝ պար կը խաղային կածէին, կը խըմէին, կը գոտեմարտէին, կուտէին, կը խըմէին, կարբենային, խոկ սստիկանապետ հազարապետն ևս ամեն կողմ կը հոկէր անկարգութեան առաջը առնելու համար։ Այս միջոցին յանկարծ լուր տարածուեցաւ թէ՝ Ծատուր օղլին եկաւ։ Վանքի շուրջը պատած ոգեստութիւնը մի ակնթարթի մէջ դադարեցաւ, ամենու վրայ սարսափ տիրեց. աւելի նորա համար, որ ամբողջ ժողովուրդը երկիւղ կը կրէր թէ մի գուցէ սստիկանապետի հետ ընդհարուի։

Ոստիկանապետն խելօք էր, ձայն ձուն չհանեց. Ակոբ զինուած ման եկաւ ամբողջ ուխտաւորներու մէջ։ Ինքը ծիծաղերես ու համակրելի և աշխայժ մէկն էր։


Մալացիք, ինչպէս ամեն հայ գիւղացիք ընտանեկան պատւոյ նախանձախնդիր են, բառի բուն նշանակութեամբ նախանձամոլ։

Ակոբի մեծ յանցանքը այն էր, որ նա մի հարս սիրած էր. այդ խնդիրը երբ պարզուեցաւ՝ ամբողջ գիւղացիք գրդուեցան նորա գէմ։ մի գիշեր անտառի մը մէջ ի պահ մտան, երբ նա կը վերագանալը գիւղ. յանկարծ բռնեցին, կապեցին, շուրջը չոր ցախերով պատեցին, վառեցին։

Քանի-քանի անդամ տեսած եմ Ակոբի

Հայրը, որ արտասուելով Տրապիզոնի փողոցները  
կը չվիր, կառավարութեան ու առաջնորդին  
գանդատագրեր կտար, որպէս զի պատժեն չա-  
րագործը:

Դուք տեսնէիք այդ քստմիելի անցքի ուրա-  
տաճմլիկ նկարագրութիւնը, որ հայրը կանէր,  
պիտի քստմիէիք ափսոս որ չեմ կարողացած  
գրի առնել:



Անտիպ գրուածներս, որ մեծ մասամբ պատ-  
րաս են. լոյս հանելու համար օգնող ձեռներու  
կը կարօտին:

1. Բառ Եր.—Ժողովրդական բառեր, զանազան  
բարբառներով գրի առնուած, մօտաւորապէս 4000  
բառ:

2. Գութան.—Գրի առնուած Բագրեանդայ նո-  
կական բարբառով. մանրամասն նկարագրուած Բագ-  
րեանդայ հայ Ժողովրդեան Երկրագործական կեանքը,  
գոմէշներու պահպանումը, վար ու ցանքը, հունձն  
ու կալը, աղունը ու բնաղունը ևլն. ամեն սովորու-  
թիւններով:

3. Տրապիզոնի հայ գիւղացոց չարքաւ կեանքը,—  
Մանրամասն նկարագրուած է գիւղացոց տունը, մա-  
րագը, կորոպը, ցանքերու տեսակները, կանաչեղին  
մնուցանելը, արտի ու լազուտի պատրաստութիւնը,  
կաղնուաը, այլ և այլ մրգեղինի ծառները, անտա-  
ռային բոյսերը, կանեփի ու քթանի պատրաստու-  
թիւնը, այլ և այլ ապրուստի եղակները, տան կահ  
կալասիները, մեծին ու փոքրին յատկացուած ամեն  
աշխատանք մանրամասն նկարագրուած:

4. Սուակիներ.—Ժողովրդական իմաստալից ա-  
ռակներ, զորս ընտրովի հաւաքուած են այլ և այլ  
բարբառներով, փոքր մասամբ ևս գրական բարբա-  
ռով և բաժանուած քանի մասերու. — 1. Իմաստուն-  
ներ, 2. Հնարագէտներ, 3. Բարեպաշտներ, 4. Միամիա-  
ներ, 5. Սիսալ ըմբռնում. 6. Երախայական ասելուկ-

ներ, 7. Խարդախներ, 8. Ցիմարներ, 9. Առասպելներ։  
5. Կենդանական վեպեր.—Ժողովրդական առակե-  
ներ են, այլ և այլ՝ նաև գրական բարբառով գրուած  
զանազան կենդանիներն օրինակ բռնելով։

6. Աւանդավիպեր.—Ժողովրդական վէպեր (լե-  
կսդաներ) են բարոյականի վրայ հիմնուած։

7. Ջրոյցներ.—Զրոյցները (անեկտոտ) այլ և այլ  
գաւառներէ հաւաքուած է գրական ու զանազան  
բարբառներով։ մանր առակներ են, մօտաւորապէս  
հազար հատ։

8. Մշոյ հարսանիքը.—Մշոյ բարբառով գրուած,  
երենց խօսած բազմաթիւ առաջներով համեմուած,  
մանրամասն նկարագրուած հարսանիքի մէջ գործա-  
ծուած ամեն ձեւ ու զրոյց։

9. Արծկի Առնեկոյս զիւղի հարսանիքը.—Որ հա-  
մառօտ նկարագրուած է։

10. Բարգելուները ճանրանիքը.—Վեպական ձե-  
ռով, ամեն առվիրութիւններով ու երգերով ընդար-  
ձակ նկարագրուած։

11. Մինազ.—Մակուայ և Արտազու ընական և  
գաւառական բաժանումները, լեռները, ջրերը, ճա-  
նապարհները, մեծ և փոքր դաշտագետինները, լեռ-  
նաշղթաները, տեսարանները, Ս. Թագէոս առաքեալի  
շրջականները ելն. մանրամասն նկարագրուած։ Երկը  
տէր խաներու ու ֆողովրդեան կեանքը հարեանցի  
գրի առնուած։ նաև Թագէոս առաքեալի վանքի  
65 ձեռագիրներու յիշտակարանները մանրամասն  
գրուած ելն. ելն. նոյնպէս ուխտավայրերը։

12. Խաղեր. — Երեխայական, պատանեկան ու  
աղջկանց խաղեր իրենց ամեն ձեռնով, շարժումնե-  
րով ու զրոյցներով մանրամասն նկարագրուած մօ-  
տաւորապէս 40 խաղ։


13. Տօներ.—Ծննդեան, Տէքնտես, Կաղանդ կամ  
Նոր տարի, Եւոտ, Մեծ պաս, Մաղկագարդ, Համբարձում,  
Վարդավառ և լն. և լն. բազմաթիւ հեթանոսական ա-  
ւանդութիւններով ու սովորութիւններով նկարա-  
գրուած։

14. Հաւատալիք. — Մնօտիապաշտական բազմա-  
թիւ սովորութիւններ, աւանդութիւններ, հաւա-  
տալիք։

15. Հեմիաբներ.—Քանի հատ զանազան բար-  
բառներով և մի հատ Շէրի ու Մէրի թուրքերէնէ  
թարգմանուած իր երգերով։

16. Առուղական երգեր.—Հայերէն զանազան ա-  
շուղներէն երգուած զանազան նիւթերու վրայ։

17. Առուղական երգեր.—Թուրքերէն, հայ աշուղ-  
ներէ երգուած։



Ս. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ<sup>1)</sup>

թ. Կ.

1. Բագրեւանդ կամ Զբարախս զաւառ . . . . .	1 50
2. Էմինեան ազգ. ժողովածու, Բ. հատոր, վէ- պեր ու հէրիաթներ այլ և այլ բարբառ- ներով . . . . .	1 25
3. Նոյնը Դ. հատոր վէպեր և հէրիաթներ այլ և այլ բարբառներով . . . . .	1 25
4. Նոյնը Ե. հատոր, Հայ-քրդական վէպեր, ձայնագրեալ քրդական եղանակներով .	1 50
5. Թագաւոր Լուսիկ եւ Սետեւ հովիկ, գրական բարբառով . . . . .	— 25
6. Հուրուրիկ եւ Սամել հովիկ, Զարսանճաղի բարբառով . . . . .	— 10
7. Մօհու, Զարսանճաղի բարբառով . . . . .	— 25
8. Շիրին շահ եւ Բարակ շահ, Մոկաց բար- բառով . . . . .	— 10
9. Յուսէփիցի ազգատնիմ եւ տարօրինակ աւա- զակ Աբրիեօմ . . . . .	— 20

Մամլոյ տակ է

10. Էմինեան ազգ. ժողովածու, Զ. հատոր. այլ և այլ բարբառներով երգեր. Ա. բաժանում — կրօնական, 2. Հարսանեաց, 3. Գովասա- նական և սիրահարական, 4. Վեճուկ դուիե-	
--	--

1) Այս գրքերը կը դոնուին ի Վազարշապատ հեղինակի մօտ եւ ի Տփիկի Գուտտեմբերգ դրականառանոցը.

37932

լու և վիճակ հանելու, 5. Օքօրոցի երգեր,  
6. Պարի երգեր, 7. Գութանի, սայլի և  
հունձքի երգեր, 8. Զաւեշտական երգեր;  
9. Քաժանում—1. Առաջներ, 2. Առած-  
ներ, 3. Հանելուկներ, 4. Անէջքներ, 5.  
Օքնանքներ, 6. Ծածկաբանութիւններ,  
7. Շուտ առելուկներ, 8. Քըղական ա-  
ռաջներ, 9. Խղոխներու սովորութիւն-  
ներ; Յաւելուած—Խլաթեցոց հարսանիքը:

